

Արդարադատության իրականացման խոչընդոտները:

Ինչպես է Եվրասիայում օրենքը ձախողում սեռական բռնություն վերապրածների հարցում

2019

“Equality Now” Non-governmental organization
«Հավասարություն հիմա» հասարակական կազմակերպության մասին:

«Հավասարություն հիմա»-ն հանդիսանում էմիջազգային իրավապաշտպան կազմակերպություն, որը պաշտպանում և խթանում է ամբողջ աշխարհի աղջիկների և կանանց իրավունքները՝ համախմբելով զանգվածային գործունեությունը միջազգային, կրոնական և ազգային իրավական պաշտպանության հետ:

Մեր իրավաբանների, ակտիվիստների և կողմնակիցների միջազգային ցանցը նպատակ ունի հասնելու իրավական և համակարգային փոփոխությունների՝ պարտադրելով կառավարություններին ընդունելու օրենքներ և ապահովել այդ օրնքների կիրառումը, որոնք վերջապես վերջ կդնեն իրավակ անանհավասարությանը, սեռական թրաֆիքինգին, սեռական բռնություններին և վնասակար սովորույթներին՝ այնպիսիք, ինչպիսիք են վաղամուսնությունները և կանանց սեռական օրգանների խեղումը:

Մեր վերջին արշավների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ www.equalitynow.org:

FACEBOOK: facebook.com/equalitynoworg

TWITTER: @equalitynow

INSTAGRAM: @equalitynoworg

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ 3

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ 5

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 7

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ 9

I. Սեռական հանցագործությունների սահմանափակ սահմանումները ենթադրում են անպատժելիություն հանցագործների համար: 12

Ա. Սեռական հիմքով կատարված հանցագործությունների սահմանումների ուսումնասիրումը մարդու իրավունքների միջազգային չափանիշների շրջանակներում ... 12

Բ. Խնդիրներ տեղական օրենքների և պրակտիկայի հետ 17

Գ. Առաջարկություններ 25

II. Արդարադատության համակարգն աշխատում է ի վնաս վերապրածի/տուժողի-խտրական 26

Ա. Սեռական հիմքով կատարված հանցագործությունների հետաքննության և դատական քննության գործընթացների ուսումնասիրում և հետազոտում մարդու իրավունքների միջազգային չափանիշների շրջանակներում 26

Բ. Խնդիրներ տեղական օրենքների և պրակտիկաների հետ 33

Գ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 38

III. Հետագա վնասը սեռական բռնության ենթարկված աղջիկ-դեռահասներին 40

Ա. Մարդու իրավունքի միջազգային չափանիշներ 40

Բ. Խնդիրներ տեղական օրենքների և պրակտիկայի հետ 41

Գ. Առաջարկություններ..... 47

IV. Ավելացող խոցելիություն – ավելացող անարդարություն սեռական բռնության նկատմամբ 47

Ա. Մարդու իրավունքների միջազգային չափանիշներ 47

Բ. Խնդիրներ տեղական օրենքների և պրակտիկայի հետ 50

Գ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 51

V. Փնտրելով արդարություն ամուսնական բռնաբարությունների դեմ 52

Ա. Մարդու իրավունքների միջազգային չափանիշներ..... 52

Բ. Խնդիրներ տեղական օրենքների և պրակտիկայի հետ 54

Գ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 55

Երախտիքի խոսք 56

Գծապատկերներ 59

Հավելվածներ 70

ՆԱԽԱԲԱՆ

Կանայք օրենքի առջև ունեն հավասարության և առանց որևէ խտրականության, օրենքի հավասար պաշտպանության իրավունք: Բայց և այնպես, ինչպես պարզ ցույց է տալիս այս զեկույցը, երբ կանայք դառնում են բռնաբարությունների զոհեր, շատ երկրների օրենքներ և իրավական համակարգեր չեն կարողանում ապահովել այդ հավասարությունը, ինչպես նյութական իրավունքում, այնպես էլ օրենքների կիրարկման համակարգերում: Արդյունքում, կանայք հաճախ դառնում են այն համակարգի զոհերը, որը պետք է նրանց պաշտպաներ:

«Խոչընդոտներ դեպի արդարադատություն, ինչպես է Եվրասիայում օրենքը ձվախողում սեռական բռնություն վերապրածների հարցում» նորարարական զեկույցում (2019) «Հավասարություն հիմա»-ն շատ հստակ ցույց տվեց, թե որքան շատ են մի շարք պետություններում ձախողել կանանց հարցում: Նախկին Խորհրդային Միության 15 երկրներում իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ պետությունների կառավարությունները պետք է վճռական կերպով գործեն, որպեսզի փոխեն իրենց օրենքները, քաղաքականությունն ու պրակտիկաները ՝ կանխարգելելու սեռական բռնությունը և վերապրածների համար արդարադատության լավագույն իրականացման ուղիներ տրամադրելու նպատակով:

Այս զեկույցը կլինի շատ կարեւոր գործիք բոլոր կառավարությունների, օրենսդիրների և իրավապաշտպանների համար, հետխորհրդային շրջանի պետությունների կանանց և աղջիկների իրավունքների պաշտպանության նպատակով, ինչպես նաև կլինի գլոբալ քննարկումների առարկա, սեռական բռնության ենթարկվածների համար արդարադատության հասանելիության հարցում:

Այս զեկույցը հրապարակվում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունման 70-րդ տարեդարձից անմիջապես հետո: Ճիշտ ժամանակն է, որպեսզի բոլոր կառավարությունները ձեռնարկեն միջոցներ, որ այն բառերը, որոնք պարունակվում են մարդու իրավունքներին վերաբերող մի շարք միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում, ինչպես նաև 2015-ին ընդունված ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներում, դառնան իրականություն աղջիկների և կանանց համար: Առաջնային կարևորություն ունի, որպեսզի ապահովվի նրանց իրավունքը զերծ մնալու սեռական բռնությունից: Առնվազն, ՄԱԿ-ի անդամ պետությունները, ներառյալ հետխորհրդային 15

պետությունները, որոնք դիտարկվում են այս զեկույցում, պետք է անեն ամեն հնարավոր բան, որպեսզի սեռական բռնություններին վերաբերող իրենց օրենքները թույլ չտան հանցագործներին խուսափել քրեական պատասխանատվությունից կամ պատժից, ինչպես նաև, որպեսզի աղջիկներն ու կանայք ունենան համապարփակ փոխհատուցման իրավունք այն դեպքերում, երբ սեռական բռնություններից զերծ մնալու իրենց իրավունքը խախտվել է: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և ակտիվիստները, ինչպիսիք են «Հավասարություն հիմա» եւ նրա գործընկերները, պատրաստ են աջակցել այս կարեւոր ջանքերին:

Պետք է մշտապես, շարունակաբար առաջ մղել, հիշեցնել աշխարհի տեսլականը, որտեղ աղջիկներն ու կանայք ապահով են իրենց տներում, իրենց շրջապատում և փողոցում, ներառյալ սեռական բռնությունից, այնպես անել, որ նրանք կարողանան օգուտ ստանալ իրենց կարողություններից և ամբողջապես, լիարժեք օգտվեն իրենց իրավունքներից ու պարտականություններից հավասարության հիմքի վրա: Մենք բոլորս պետք է մեր անհատական և խմբային ներդրումն ունենանք, որպեսզի իրագործենք վերոնշյալ տեսլականը որքան հնարավոր է շուտ:

Էլիզաբեթ Էվաթթ, Ավստրալիայի պատվո շքանշանի դափնեկիր

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովի նախկին նախագահ,

ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի նախկին անդամ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Նախկին խորհրդային միության անդամ 15 պետությունների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Էստոնիայի, Վրաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Լատվիայի, Լիտվայի, Մոլդովայի, Ռուսաստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Ուկրաինայի և Ուզբեկստանի օրենքներն ուպրակտիկաները, որոնք կապված են բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողություններին, փաստացի զրկում է սեռական բռնությունների զոհերի համար արդարադատության հասանելիությունը:

Սա կապված է նրա հետ, որ իրավական համակարգը հանցագործներին տրամադրում է մի շարք հնարավորություններ խուսափելու քրեական պատասխանատվությունից կամ պատժից, այդ թվում՝

- Սեռական բռնության հանցագործությունների սահմանափակ սահմանումների ճանապարհով,
- Որոշակի հանգամանքների առկայության պարագայում, օրենքն ուղղակիորեն ազատում է մեղավորին պատասխանատավությունից կամ պատժից,
- Այն պատճառով, թե ինչ ճանապարհներով է իրականացվում սեռական բռնության հանցագործությունների հետաքննությունն ու նախաքննություն ՝ այդ թվում դեռահաս աղջիկների հանդեպ,
- Որոշ բռնի գործողություններ որպես հանցագործություն բնորոշելու անկարողության պատճառով, ինչպես նաև
- Որպես հետևանք ընդհանրապես կանանց և աղջիկների հանդեպ բազմակողմանի և բազմաշերտ խտրականության, ինչպես նաև խոցելիության մյուս ձևերի հետ հատման պատճառներով:

Արդարադատության համակարգի հանդեպ հավատքի բացակայությունը, ինչպես նաև սոցիալական նորմերը, որոնց վրա ազդում է հայրիշխանական մշակույթը, որն իր հերթին, ազդում է արդարադատության իրականացման վրա և որը մեղադրում է կանանց և աղջիկներին բռնության համար, որը նրանք վերապրել են, նշանակում է, որ առկա է սեռական բռնությունների վերաբերյալ տեղեկությունների զգալի պակաս: Նույնիսկ այն ժամանակ, երբ կանայք և աղջիկները բռնության տարբեր ձևերի մասին հաղորդում են ներկայացնում ոստիկանությանը, սովորաբար ֆիզիկական բռնությունները արձանագրվում են, այն դեպքում, երբ սեռական բռնությունը կամ սեռական բռնության մեջ հարկադրելը

հաճախ անտեսվում են: Այդ իսկ պատճառով, սեռական բռնության վերաբերյալ ներկայացված հաղորդումներից շատերը շատ հաճախ այդպես էլ մնում են չարձանագրված որպես այդպիսին:

Օրենքի և պրակտիկաների ամենախնդրահարույց դրույթները[1], որոնք ծառայում են արդարության մերժմանը այն մարդկանց համար, ովքեր վերապրել են սեռական բռնություն, թվում է թե այն փաստն է, որ սեռական բռնությունների որոշ հանցարարքների վերաբերյալ գործի հարուցման սկիզբը տրվում է միայն տուժողի բողոքի հիման վրա («պետական-մասնավոր» մեղադրանքներ) և այդ հանցագործությունների համար նախատեսում է կողմերի միջև հաշտություն:

Այդ դրույթները թույլ են տալիս տեղական իրավապահ մարմիններին, ոչ միայն հետ պահել սեռական բռնության ենթարկվածներին նման պահանջ ներկայացնելուց, այլև կարճել հետաքննությունները բոլոր այն դեպքերում, երբ սեռական բռնության ենթարկվածը ցանկացած պատճառով հրաժարվում է իր բողոքից, կամ երբ հանցագործը ճնշում է գործադրում, որպեսզի գործն ավարտվի հաշտությամբ: ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովը (CEDAW) պարզել է, որ նման իրավիճակ առկա է Ղրղզստանում, որտեղ նա անցկացրել է հարսերի առևանգման փաստերով հետաքննություն և 2018թվականի սեպտեմբերին տեղի իշխանություններին համառորեն կոչ է արել սկսել հարկադիր հետաքննություն բռնաբարության համար (“*ex officio*”).[2]

Սեռական բռնության հետ կապված հանցագործությունների սահմանափակ սահմանումները սեռական բնույթի մի շարք բռնի և չհամաձայնեցված գործողություններ թողնում են առանց որևէ պատժի: Ավելին, դատաքննության ողջ ընթացքում ծանրաբեռնող ապացույցների պահանջները, գենդերային կարծրատիպերը և դատավարության ողջ ընթացքում կրկնակի անգամ վերապրելու զգացողությունն էլ ավելի են զրկում սեռական բռնության ենթարկվածներին արդարադատությունից: Դիտարկվող երկրներից շատերում,

[1] Տես ստորև ներկայացված աղյուսակը: Իրավաբանների միջազգային հանձնաժողովը քննադատեց պետական եւ մասնավոր դատախազության համակարգը՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կողմից 2014թ. մարտին Ղազախստանում Մարդու իրավունքների համընդհանուր պարբերական զեկույցի ներկայացման մեջ՝ նշելով, որ այս համակարգը սեռական բռնության զոհերին կրկնահի զոհ դառնալու վտանգի առջև է կանգնեցնում, քանի որ հանցագործները հաճախ կարող են «համոզել» տուժողին փոխհատուցում ստանալու համար կամ առաջին հերթին բողոք չներկայացնել»: Հասանելի է http://www.refworld.org/docid/55b779ca4.html հասցեով

[2] Տես կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողով, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն, Ղրղզստանի խնդրանքը CEDAW / C / OP.8 / KGZ.1:

որտեղ դեռահաս աղջիկները դարձել են հարկադիր ամուսնության, առևանգման, վաղամուսնության զոհեր, շատ հաճախ հնարավորություն չեն ունենում ստանալու արդարդատություն սեռական բռնության զոհ դառնալու համար: Չնայած այն հանգամանքին, որ ամուսնական բռնաբարությունն անմիջականորեն չի բացառվում օրենքով որպես հանցագործություն, բայց այն շատ հազվադեպ է դատապարտվում կամ պատժվում: Խոցելի կարգավիճակ ունեցող կանայք ավելի քիչ հավանականություն ունեն ստանալու արդարություն սեռական բռնության ենթարկված լինելու համար, որի պատճառով նրանք տառապում են:

Նախկին Խորհրդային միության անդամ 15 պետությունները, ժառանգել են խորհրդային շրջանի քրեական օրենսգրքի, եթե ոչ ամբողջ, ապա մի մեծ մաս, ներառյալ կառուցվածքը, իրավական հասկացություններն ու սահմանումները: Այդպիսով, մի երկրում դրական բարեփոխումները կարող են ոգեշնչել հարևան երկրում հետագա բարեփոխումների, որին մենք ականատես եղանք բռնաբարություն կատարելու ազատման արգելքի մասին նմանօրինակ օրենքների ընդունմամբ 2017 եւ 2018 թվականներին Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում՝ Թունիսիում, Հորդանանում, Լիբանանում և Պաղեստինում:

Հուսով ենք, որ ներկայիս իրավական կարգավորումների արտացոլումը, գույքագրումը, ողջ տարածաշրջանում կազմակերպությունների և ակտիվիստների հետ համագործակցության շնորհիվ մեզ հնարավորություն կտա ստեղծելու հիմքեր քարոզչական ռազմավարությունների մշակման համար այն գործընկերների հետ, որոնք կոչ են անում իրավապաշտպան բարեփոխումներ իրականացնել՝ հիմնված միջազգային եւ տարածաշրջանային մարդու իրավունքների և չափանիշների վրա, ինչպես նաև համատեղ քարոզչական գործողությունների ապագա պլանավորման համար:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս զեկույցում ներկայացվում է նախկին Խորհրդային Միության 15 երկրների սեռական բռնության վերաբերյալ օրենքների ընդհանուր դիտարկում և օրենսդրության բացերի վերլուծություն, որոնք թույլ են տալիս սեռական հանցագործներին խուսափել պատասխանատվությունից: Ինչպես նաև ներկայացվում են երկրների օրենսդրություններից մանրամասն նկարագրություններ, որոնք պարունակում են համապատասխան

օրենսդրական ակտեր:[3] Մենք հնարավորինս ներառել ենք տեղեկություններ, թե ինչպես են կիրառվում օրենքները գործնականում:

Հետազոտությունը կատարվել է ուսումնասիրելու հետևյալ երեք հարցերը՝

1. քրեական պատասխանատվությունից/պատժից ազատելը, որոնք նախատեսված են քրեական օրենսգրքերում սեռական բռնության մասին կոնկրետ հոդվածներում,
2. քրեական պատասխանատվությունից/պատժից ազատելը, որոնք պարունակվում են քրեական օրենսգքրերի ընդհանուր դրույթներում, որոնք կիրառվում են բոլոր հանցագործությունների համար՝ ներառյալ սեռական բռնությունների.[4]
3. Օրենքի կիրառումը գործնականում:

Նպատակ ունենալով ավելի լավ հասկանալու և ընկալելու այն փաստը, թե արդյոք ըստ պատշաճի գործում է օրենքը սեռական բռնության զոհերի համար արդարադատության մատչելիությունը ապահովելու համար, այս զեկույցն ուսումնասիրում է նաև այդ հանցագործությունների ընդհանուր իրավական սահմանումները և բռնաբարության/սեռական բռնության զոհերի արդարադատության մատչելիության, հասանելիության որոշ բացթողումներ: Այնուհետև դիտարկվում են հարակից հանցագործությունները, ինչպիսիք են հարսի առևանգումը և հարկադիր ամուսնությունները, հասկանալու համար, թե ինչպես են դրանք նպաստում հանցագործների անպատժելիությանը: «Հավասարություն հիմա»-ն այս հարցերը կդիտարկի և կբացահայտի իր հետագա աշխատանքներում:

Մեթոդաբանությունը բաղկացած էր սեռական բռնություններին վերաբերող օրենքների գրասենյակային ուսումնասիրություններից, որոնք կատարվել են 2018 թվականի փետրվարից հուլիսն ընկած ժամանակահատվածում՝ հիմք ընդունելով պետությունների

[3] Ղրղզստանը եւ Ուկրաինան ընդունել են նոր օրենք, որն ուժի մեջ է մտել համապատասխանաբար 2019 թվականի հունվարի 1-ին եւ 2019 թվականի հունվարի 11-ին: Զեկույցում ներկայացված գծապատկերներում նշում է նոր օրենսդրությունը, թեև զեկույցում վերլուծված պրակտիկան վերաբերում է մինչեւ 2019 թվականի հունվարը գործող օրենսդրությանը:

[4] Այնուհանդերձ, հետխորհրդային յուրաքանչյուր երկրի օրենսդրությունը նախատեսում է ցանկացած պատասխանատվությունից ազատվելու հնարավորություն, որպես կանոն, ցանկացած հնարավոր հանցագործության համար, որը սովորաբար հիմնված է հանցագործության ծանրության վրա, ինչպես նաեւ պատժից ազատում: Քրեական պատասխանատվությունից ազատելը կարող է կիրառվել տարբեր փուլերում, ներառյալ՝ հետաքննության ընթացքում, բայց միշտ՝ մինչեւ դատարանի որոշումը: Մյուս կողմից, պատժից ազատելը ցույց է տալիս, որ հանցագործը ենթակա է քրեական պատասխանատվության և դատարանը դատապարտվել է պատասխանատվության: Միայն այդ դեպքում դատարանը կարող է որոշակի պատճառներով հանցագործին ազատել պատժից:

պաշտոնական քրեական օրենսգրքերը, քրեական դատավարության օրենսգրքերը և պաշտոնական օրենսդրության այլ աբղյուրներ՝ բնօրինակ լեզուներով, ինչպես նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով, բոլոր այն դեպքերում երբ հասանելի էին, ուսումնասիրվել են նաև ՄԱԿ-ի պաշտոնական փաստաթղթեր, միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների հաշվետվություններ և այլ հեղինակավոր աղբյուրներ: «Հավասարություն հիմա»-ն կատարել է նաև հարցումներ պարզելու համար, թե որքանով են քրեական օրենսգրքի ընդհանուր հոդվածները կիրառվում հանցագործին քրեական պատասխանատվությունից ազատելու համար և/կամ սեռական բռնություն կամ դրան հարակից հանցագործություն կատարած անձին պատժելու համար: Տեղական խմբերը հաստատեցին, որ իրենց կառավարությունները հիմնականում չեն հավաքում այս հարցերի վերաբերյալ վիճակագրական տվյալներ: Այնուամենայնիվ, տեղական համայնքի տրամադրած տեղեկատվությունը, որը հիմնված է սեփական փորձի վրա, շատ կարևոր է հասկանալու համար, թե ինչպես են այդ օրենքները կիրառվում պրակտիկայում՝ սեռական հանցագործությունների հետ կապված հանցագործությունները լուսաբանելու, հետաքննելու, հետապնդելու եւ պատժելու ժամանակ:

2018 թ. Նոյեմբերի 19-21-ը «Հավասարություն հիմա»-ն Թբիլիսիսում անցկացրեց ժողով, որին մասնակցել են նախկին Խորհրդային Միության 15 երկրների 13-ից (բացառությամբ Ուզբեկստանից եւ Թուրքմենստանից) փաստաբաններ և իրավապաշտպաններ: Հանդիպման ժամանակ այս զեկույցում ընդգրկված հարցերը քննարկվել և վերլուծվել են համապատասխան երկրների համար: Զեկույցը ներառում է նաև քննարկման արդյունքներ եւ տեղեկություններ սեռական բռնության մասին օրենքների կիրառման մասին, որոնք տրամադրվել են տեղական խմբեր կողմից ժողովի ընթացքում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Սեռական բռնությունները հիմնականում վերաբերում են կանանց և աղջիկներին, բայց դա վերաբերում է նաև տղամարդկանց և տղաներին: Յուրաքանչյուր ոք պետք է ստանա հավասար արդարություն: Քանի որ շատ օրենքներ ակնհայտորեն խտրականություն են դնում կանանց և աղջիկների հանդեպ, և քանի որ բռնաբարություն կատարողները գրեթե բացառապես տղամարդիկ են եւ սեռական բռնության զոհերի գերակշիռ մասը կանայք են եւ

աղջիկները, այս զեկույցը հիմնականում կազմված է այս տեսանկյունից: Այնուամենայնիվ, «Հավասարություն հիմա»-ն ճանաչում և ընդունում է, որ տղամարդկանց և տղաների նկատմամբ սեռական բռնությունը հիմնականում չի բարձրաձայնվում և չի ուսումնասիրվում, որը, տղամարդկանց բռնաբարությունների հանդեպ գերիշխող հայրապետական վերաբերմունքի պատճառով, հաճախ վնասում է նրանց իրավունքին արդյունավետ պաշտպանություն ստանալու համար:

Գենդերային-չեզոք օրենքներն ու քաղաքականությունը երբեմն ունեն խտրական ազդեցություն կանանց և աղջիկների նկատմամբ, օրինակ, եթե պետությունը չի տրամադրում բացառիկ կամ հիմնականում կանանց համար անհրաժեշտ ծառայություններ, ոչ պակաս վերարտադրողական ծառայություններ մատուցելու համար: Ինչպես նաև, սեռի հիմքով կատարված բռնությունը, ինչպես օրինակ, ընտանեկան/ամուսնական բռնությունը, որը քննարկվում է ստորև, միշտ չէ, որ հստակ ամրագրված է օրենքում, ինչը կարող է և նշանակում է, որ կանանց և աղջիկների իրավունքի կոնկրետ խախտումները պատշաճորեն չեն ուսումնասիրվում կամ բավարար ռեսուրսներ չեն ստանում և, հետևաբար, պարբերաբար մնում են անպատիժ: Ամբողջ աշխարհում այն ներառում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են կանանց սեռական օրգանների անդամահատումը, ամուսնական բռնաբարությունը, երեխաների վաղամուսնությունը, սեռական ոտնձգությունները, հարկադիր ամուսնությունը, հարկադիր ամլացումը (ստերիլիզացումը) եւ այլն:

Սեռական բռնությունից զերծ կյանք ապրելու ունակությունը ոչ միայն մարդու հիմնարար իրավունքն է, այլև անհրաժեշտ է հասնել Կայուն Զարգացման 5-րդ նպատակին, որն ամրագրված է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովի գենդերային հավասարության եւ 2030 թվականի կայուն զարգացման օրակարգում (SDG), որ ՄԱԿ-ի բոլոր անդամ երկրները պարտավորվել են պահպանել և որոնք ներառում են հետևյալ թիրախները.

5.1. Ամենուր վերջ դնել բոլոր կանանց և աղջիկների նկատմամբ գործադրվող խտրականության բոլոր ձևերին,

5.2. Վերացնել բոլոր կանանց և աղջիկների հանդեպ գործադրվող բռնության բոլոր ձևերը պետական և մասնավոր ոլորտներում, այդ թվում՝ թրաֆիքինգը և սեռական ու շահագործման այլ տեսակները

5.3. Վերացնել բոլոր վնասակար գործելաձևերը, ինչպիսիք են երեխաների, վաղ և հարկադրյալ ամուսնությունները և կանանց սեռական օրգանների խեղումը

Բացի այդ, Կայուն Զարգացման Ծրագրի 16-րդ նպատակը հետեւյալն է.

16.1. Զգալիորեն նվազեցնել բռնության բոլոր ձևերը և դրանց առնչվող մահերի ցուցանիշը,

16.2. Վերջ դնել երեխաների չարաշահմանը, շահագործմանը, թրաֆիքինգին, նրանց դեմ գործադրվող բոլոր տեսակի բռնություններին և խոշտանգումներին,

16.3. Խթանել օրենքի գերակայությունը ազգային և միջազգային մակարդակներում և ապահովել արդարադատության հավասար հասանելիություն բոլորի համար:

Մասնավորապես, տարածաշրջանային եւ միջազգային իրավունքը և «ՄԱԿ-Կանայք»[5] խորագրի ներքո մշակված փորձագիտական ուղեցույցները ավելի մանրամասն չափորոշիչներ են սահմանել, որոնցով օրենսդիրները պետք է աշխատեն:

Հետխորհրդային երկրներից շատերը Եվրոպայի Խորհրդի անդամ են և պետք է վավերացնեն Ստամբուլի կոնվենցիան (որը բաց է անդամ երկրների և ոչ անդամ պետությունների համար) և, անհրաժեշտության դեպքում, ներդաշնակեցնելու իրենց քրեական օրենսգրքերը՝ կանանց եւ աղջիկներին ավելի լավ պաշտպանելու համար: Այս զեկույցը գրելու պահին միայն Էստոնիան և Վրաստանն են վավերացրել վերոնշյալ Կոնվենցիան, մինչդեռ Հայաստանը, Լատվիան, Մոլդովան և Լիտվան ստորագրել են, սակայն դեռ չեն վավերացրել այդ Կոնվենցիան: Սույն հետազոտության ընթացքում ուսումնասիրված բոլոր պետությունները ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (CEDAW) կողմերն են:

[5] ՄԱԿ-ի կանանց վիրտուալ գիտելիքների կենտրոնը, որը նպատակ ունի վերջ դնելու կանանց եւ աղջիկների հանդեպ բռնությանը, սեռական բռնության մասին օրենքի ուղեցույցները հասանելի են http://www.endvawnow.org/en/modules/view/8-legislation.html հասցեով:

Թեև վերջին մի քանի տարիների ընթացքում որոշ երկրներ որոշակի քայլեր են ձեռնարկել կենցաղային և սեռի հիմքերով բռնության դեմ պայքարի ուղղությամբ (օրինակ՝ Վրաստան, Էստոնիա, Հայաստան, Ղրղզստան, Մոլդովա, Լատվիա և Ուկրաինա), այնուամենայնիվ սեռական բռնությունը հիմնականում անտեսվել է ամբողջ Եվրասիայում՝ ի համեմատություն կանանց դեմ բռնության այլ ձևերի հետ: 2017 թվականին Ռուսաստանում եւ Ղազախստանում ընտանեկան բռնության որոշ տեսակներ ապաքրեականացվեցին, ինչը կարող է նաև բացասական հետևանքներ ունենալ սեռական բռնության դեմ պայքարում:

Նախկին Խորհրդային Միության որոշ երկրներ (օրինակ՝ Ադրբեջան, Ղազախստան, Ուզբեկստան, Թուրքմենստան, Տաջիկստան, Բելառուս և Ռուսաստան) բարենպաստ պայմաններ չեն ապահովում, ինչպես նաև հաճախ միջամտում են մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող քաղաքացիական հասարակությանը, ներառյալ կանանց իրավունքներով զբաղվող կազմակերպություններին, աշխատելու մարդու իրավունքների խնդիրներին առնչվող հարցերի շուրջ, ինչպես նաև արդյունավետորեն հասնելու արդարադատության սեռական բռնության ենթարկվածների համար: Այդպիսով, այս երկրներում քաղաքական մթնոլորտի փոփոխությունը, ազդում է և խորացնում է դժվարությունները մարդու իրավունքների տարբեր տեսակների խախտումների, այդ թվում ՝սեռի հիմքով բռնությունների, դեպքերով արդարության հասնելու համար:

I. Սեռական հանցագործությունների սահմանափակ սահմանումները ենթադրում են անպատժելիություն հանցագործների համար:

Ա. Error! Bookmark not defined. Սեռական հիմքով կատարված հանցագործությունների սահմանումների ուսումնասիրումը մարդու իրավունքների միջազգային չափանիշների շրջանակներում

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW) իր Հոդված 2-ում, ինչպես նաև Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի Գլխավոր Առաջարկությունների Հոդված 19[6] և 35[7]-ում պահանջում է

[6] Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողով, 19-րդ Ընդհանուր հրաման, Կանանց նկատմամբ բռնություն, 1992 թ.

բոլոր պետություններին ընդունել կանանց նկատմամբ ամեն տեսակի խտրականությունն արգելող համապատասխան օրենսդրական և այլ միջոցներ, ներառյալ պատժամիջոցներ, որտեղ դրանք անհրաժեշտ են, ինչպես նաև ձեռնարկել բոլոր համապատասխան, ներառյալ՝ օրենսդրական, միջոցները՝ փոխելու կամ վերացնելու համար այն գործող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, սովորույթներն ու պրակտիկան, որոնք ներկայացնում են խտրականություն կանանց նկատմամբ, վերացնել ներպետական քրեական օրենսդրության բոլոր այն դրույթները, որոնք խտրականություն են ներկայացնում կանանց նկատմամբ:

Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին (***Ստամբուլի Կոնվենցիա)*** անդրադառնում է սեռական բռնությանը, ներառյալ բռնաբարությանը վերաբերող հետևյալ հարցերին, որոնք են՝

Հոդված 36՝ Սեռական բռնություն, այդ թվում՝ բռնաբարություն

1). Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական եւ այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ դիտավորությամբ կատարվող հետևյալ գործողությունները քրեականացնելու համար՝

ա. մեկ այլ անձի հետ, առանց այդ անձի համաձայնության,վագինալ, անալ և օռալ ճանապարհով թափանցելու միջոցով, մարմնի որևէ մասի կամ առարկայի միջոցով սեռական բնույթի գործողություն կատարելը,

բ. մեկ այլ անձի հետ, առանց այդ անձի համաձայնության,սեռական բնույթի այլ գործողություն կատարելը,

գ. անձին, առանց նրա համաձայնության, երրորդ անձի հետ սեռական բնույթի գործողություններ կատարելուն կամ ենթարկվելուն ստիպելը,

2). Համաձայնությունը պետք է տրվի կամովին՝ անձի ազատ կամահայտնության հիման վրա, որպիսին պետք է գնահատվի վերաբերելի բոլոր հանգամանքներն իրենց ամբողջության մեջ դիտարկելու արդյունքում:

---

[7] Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողով, CEDAW / C / GC / 35, Կանանց նկատմամբ գենդերային բռնության վերաբերյալ թիվ 35 ընդհանուր Ընդհանուր հանձնարարականը, 19-րդ Ընդհանուր Հանձնարարականի նորացումը:

3). Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն հոդվածի 1-ին մասի դրույթները կիրառելի լինեն նաև այն արարքների նկատմամբ, որոնք կատարվում են ներկա կամ նախկին ամուսնու կամ զուգընկերոջ նկատմամբ՝ ներպետական իրավունքում դրանց տրված իմաստով:

Միջազգային և տարածաշրջանային մարմինները տարբեր դատական որոշումներ են կայացրել սեռական բռնության սահմանման վերաբերյալ, ներառյալ, թե ինչպես պետք է մեկնաբանել համաձայնության հարցը:

Մարդու իրավունքների միջազգային ստանդարտների հիման վրա բռնաբարության սահմանումները պետք է փոփոխվեն, հաշվի առնելով հարկադրանքի հանգամանքները: Նախկին Հարավսլավիայի եւ Ռուանդայի[8] հատուկ տրիբունալների իրավունքի համաձայն, բռնաբարությունը կատարվում է այն ժամանակ, երբ իրավախախտը օգտագործում է «ուժ, ուժի սպառնալիք կամ սպառնալիք», ինչպես նաեւ երբ «օգտագործում է պարտադրման պայմանները»: Միջազգային քրեական դատարանի որոշումների համաձայն, զոհերի համաձայնությունը հաշվի չի առնվում, եթե հանգամանքները զրկում են նրանց «**կամավոր եւ իսկական համաձայնությունից**»: Տուժողի լռությունը կամ նրա դիմադրությունը չի նշանակում համաձայնություն:[9] Հետևաբար, համաձայնությունը չի կարող լինել կամավոր և իսկական, և այդ դեպքում այն չի ունենում որևէ նշանակություն հարկադրողական հանգամանքների առկայության դեպքում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) վճիռ կայացրեց, որ չնայած քրեական դատարանների կողմից տրամադրված բռնաբարության սահմանմանը, որը վերաբերվում է զինված ընդհարումների ժամանակ կատարված բռնաբարություններին, բարձրացված հարցերը համընդհանուր են ու կարևոր են ցանկացած համատեքստում:[10] Դատարանի կարծիքով, Մ.Ս. ընդդեմ Բուլղարիայի գործով, երբ հանցագործը զոհին կանխամտախված կերպով տարել է ամայի տարածք, ստեղծված հարկադիր պայմանները եղել են բավարար, որպեսզի հաղթահարվի սեռական ինքնավարությունը: Դատարանը եկել է

[8] Դատախազ Ա. Ակայեսու, Գործի թիվ ICTR-96-4, Դատաստան, 02.09.1998 թ., Թիվ 596-598:

[9] Միջազգային քրեական դատարան, «Դատավարության կանոններ եւ ապացույցներ», ՄԱԿ-ի Միջազգային դատարան- ASP/1/3 (2002),), կանոն 70 ա-վ.

[10] Մ.Ս. ընդդեմ Բուլղարիա, 39272/98, Եվրոպայի խորհուրդը՝Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2003 թ. Դեկտեմբերի 3, թիվ 163:

այն եզրահանգման, որ «ցանկացած սեռական ներթափանցում, առանց տուժողի համաձայնության, բռնաբարություն է, և այդ համաձայնությունը պետք է տրվի կամավոր կերպով՝ մարդու կամքի արդյունքում, որը գնահատվում է շրջակա միջավայրի պայմանների համատեքստում»:[11]

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (CEDAW հանձնաժողով) իր Ընդհանուր Առաջարկություններ 35-ում նախատեսում է, որ սեռական հանցագործությունների սահմանումը, ներառյալ ամուսնական բռնաբարությունները և ժամադրման ժամանակ կատարվող բռնաբարությունները, պետք է հիմնված լինի ինքնակամ, կամավոր համաձայնության բացակայության վրա և հաշվի առնի հանգամանքների պարտադրանքը:[12] Բացի այդ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովը (CEDAW) *Karen Tayag Vertido ընդդեմ Ֆիլիպիններ գործով հիմնվում է միջազգային դատարանների կողմից մշակված չափանիշների վրա*, առաջարկելով, որպեսզի պետությունը բնռաբարության սահմանման մեջ վերացնի բռնության չափանիշը և դրա փոխարեն տա բռնաբարության հստակ սահմանում, որը

ա) պահանջում է «միանշանակ և կամավոր համաձայնության» առկայություն և պահանջում է, որ մեղադրյալը ներկայացնի իր քայլերի ապացույց, որոնք ձեռնարկվել են պարզելու համար, արդյոք հայցվորը/վերապրողը համաձայնվել է, տվել է իր համաձայնությունը,

բ) պահանջում է, որ արարքը տեղի ունեցած լինի «դաժան հանգամանքների» ներքո և ներառի մի շարք հարկադրական հանգամանքներ:[13]

Բացի այդ ՄԻԵԴ-ը Մ.Ս. ընդդեմ Բուլղարիա գործով նախատեսում է, որ բազմաթիվ հոգեբանական գործոնների կամ հանցագործների հանդեպ վախի պատճառով սեռական բռնության զոհերը, հատկապես անչափահասները, հաճախ չեն ընդդիմանում իրավախախտներին:[14] Դատարանը նշել է, որ «սեռական հանցագործությունների քրեական հետապնդման նկատմամբ ցանկացած կոպիտ մոտեցում, ինչպիսին է բոլոր

[11] Մ.Ս. ընդդեմ Բուլղարիա 102-107 and 163.

[12] Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե, CEDAW / C / GC / 35, Կանանց նկատմամբ գենդերային բռնության վերաբերյալ թիվ 35 ընդհանուր առաջարկ, թարմացված թիվ 19 ընդհանուր դրույթը, §5:

[13] Karen Tayag Vertido ընդդեմ Ֆիլիպիններ,CEDAW, թիվ 18/2008 հաղորդակարգ, ՄԱԿ-ի փաստաթղթեր, CEDAW / C / 46 / D / 18/2008 (2010), 8.9 (բ) (ii):

[14] Մ.Ս. ընդդեմ Բուլղարիա Դիմում 39272/98, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2003 թ. Դեկտեմբերի 4-ի թիվ 164 որոշում:

հանգամանքներում ֆիզիկական դիմադրողականության ապացուցման պահանջը, կարող է հանգեցնել նրան, որ որոշ տեսակի բռնաբարություններ կմնան անպատիժ և դրանով իսկ կվտանգվի անձի սեռական ազատության արդյունավետ պաշտպանությունը: ... », այնպես, որ պետությունը պարտավոր է պատժել և արդյունավետորեն դատապարտել «ցանկացած անձի, ով չունի սեռական բնույթի համաձայնություն, այդ թվում՝ տուժողի կողմից ֆիզիկական դիմադրության բացակայության պայմաններում»:[15]

Կանանց նկատմամբ բռնության դեմ օրենսդրության վերաբերյալ ՄԱԿ-ի Ձեռնարկում նշվում է, որ սեռական բռնության մասին օրենքները պետք է ներառեն հարկադրանքի լայնածավալ հանգամանքներ, այլ ոչ թե շեշտը դնեն ուժի կիրառման առկայության վրա:[16]

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովը (CEDAW) և ՄԱԿ-ի կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների ու հետևանքների հարցերով հատուկ զեկուցողը, խորհուրդ են տվել հետազոտվող պետություններին, որ նրանք փոխեն բռնաբարության և սեռական բռնության վերաբերյալ խտրական սահմանումները.

- Ղրղզստան. 2018 թ.-ին ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի (CEDAW) հարսերի առևանգման հանձնախմբի կողմից կատարված հետաքննության ընթացքում առաջարկվել է, որպեսզի պետությունը փոխի բռնաբարության սահմանումը և ապահովի, որ այն «հիմնված լինի կամավոր համաձայնության բացակայության վրա և հաշվի առնի հարկադրանքի հանգամանքները»:[17]
- Վրաստան. 2016 թ.-ին կանանց նկատմամբ բռնության հարցերով հատուկ զեկուցողը Երկիր կատարած այցից հետո խորհուրդ է տվել «փոփոխություններ կատարել քրեական օրենսգրքում բռնաբարության սահմանման մեջ, որպեսզի ապահովեն Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման պահպանումը և Ստամբուլի կոնվենցիային համապատասխանությունը:[18]

---

[15] Id. at¶ 166.

[16] Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ օրենսդրական ձեռնարկ, Միավորված Ազգերի Կազմակերպություն, 2010, ST / ESA / 329, p. 26, հասանելի: http://www.un.org/womenwatch/daw/vaw/handbook/Handbook%20for%20legislation%20on%20violence%20against%20women.pdf

[17] Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե, Ղրղզստանի հետ կապված հարցերի վերաբերյալ, Կիրակի, 21 սեպտեմբերի, 2018 թ., CEDAW / C / OP.8 / KGZ / 1, կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Կոնվենցիայի ՖԿԿ-ի 8-րդ հոդվածի համաձայն . 92.

[18] Դուբրավկա Շիմոնովիչի զեկույցը՝կանանց նկատմամբ բռնության հատուկ զեկուցող, Վրաստանում իր առաքելության պատճառները եւ հետեւանքները; Հուլիսի 22, 2016, A / HRC / 32/42 / Add.3

- Էստոնիա. 2016 թ.-ին ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (CEDAW) իր եզրափակիչ դիտողություններում մտահոգություն է հայտնել բռնաբարության նեղ սահմանման վերաբերյալ և առաջարկել է «Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարել բռնաբարության սահմանումը վերանայելու համար, որպեսզի այն դիտարկվի որպես ցանկացած անհամաձայնեցված սեռական ակտ՝ անկախ որևէ ցավից, ֆիզիկական բռնությունից և/կամ առողջությանը վնաս տալու աստիճանից»: [19]

Բ. Խնդիրներ տեղական օրենքների և պրակտիկայի հետ

Բացահայտելով սեռական հանցագործությունների բացահայտման հետ կապված խնդիրները Եվրասիայում տեղական օրենքների և պրակտիկայի շրջանակներում:

Քրեական օրենսգրքերի շրջանակներում քրեական պատասխանատվությունից/կամ պատժից ազատելու հիմքերը:

Եթե անձը հանցանք է գործել ուսումնասիրված երկրների օրենսգրքերին համապատասխան, ապա նա միշտ չէ, որ պատժվում է կամ դատապարտվում, եթե կատարված հանցագործությունը դասակարգվում է որպես պակաս լուրջ կամ պակաս ծանր:[20] Կանանց եւ աղջիկների հանդեպ կատարված բազմաթիվ հանցագործություններ համարվում են պակաս լուրջ/ծանր հանցագործություններ, որոնց դեպքում տեսականորեն կիրառելի են ներքոնշյալ դրույթները, ներառյալ սեռական բռնության դեպքում, ինչը թույլ է տալիս իրավախախտին ազատ արձակել:

- *Սոցիալական վտանգավոր բնույթի կորուստ*

[19] ԿՈՆՎԵՆՑԻԱ, Եզրափակիչ դիտարկումներ Էստոնիայի միասնական հինգերորդ եւ վեցերորդ պարբերական զեկույցների վերաբերյալ, 2016 թ. Նոյեմբերի 18, CEDAW / C / EST / CO / 5-6, կետ. 18 (բ) եւ 19 (բ) կետերը:

[20] Վերանայված երկրների մեծամասնության քրեական օրենսգիրքը նախատեսում է հանցավոր գործողությունների երեք կատեգորիաներ (ոչ մեծ ծանրության, ծանր և առանձնապես ծանր), կախված իրենց լրջությունից: Հանցագործության լրջությունը որոշվում է կոնկրետ հանցագործությունների համար կիրառվող պատժամիջոցներով: Օրինակ. Վրաստանի Քրեական օրենսգրքի համաձայն, մինչեւ 5 տարի ազատազրկման դատապարտված հանցագործությունը, ոչ մեծ ծանրության հանցագործություն է: 5-ից 10 տարի ազատազրկմամբ պատիժ կրող հանցագործությունները լուրջ հանցագործություններ են: Ավելի քան 10 տարի ազատազրկման դատապարտվածությունը առանձնապես ծանր հանցագործություններ են:

Եթե անձը կատարում է հանցագործություն, որը բնութագրվում է որպես պակաս լուրջ, և հանցագործությանը վերաբերող հանգամանքները հետագայում փոխվում են, որի արդյունքում հանցագործություն կատարած անձը համարվում է «հասարակության համար այլևս ոչ վտանգավոր», այդ անձը կարող է պատասխանատվություն չկրել կատարած հանցանքի համար: Տարիներ շարունակ, շատ հետխորհրդային երկրներում, այս դրույթը հաճախ չարաշահել են, որպեսզի սեռական հանցագործություններ կատարածներին ազատեն պատասխանատվությունից տուժողի հետ ամուսնությունից հետո: Ռուսաստանի Քրեական օրենսգրքի 134-րդ հոդվածը դեռևս հստակ նախատեսում է, որ եթե մեծահասակ անձը (բարձր 18 տարեկանից) ամուսնանա մինչև 16 տարեկան աղջկա հետ, ում հետ նա սեռական հարաբերություն է ունեցել վերջինիս ենթադրյալ համաձայնությամբ, նա չի պատժվի բռնաբարության համար, ինչպես սահմանված է օրենքով: Չնայած մինչև 18 տարեկանների ամուսնությունը (16 տարեկանում թույլատրվում է բացառիկ հանգամանքներում) չի կարող պաշտոնապես գրանցվել Ռուսաստանում, Ռուսաստանի ինքնավար մարզերը իրավունք ունեն նվազեցնել տարիքը մինչեւ 14 տարեկան: Պատասխանատվությունից ազատման մասին դրույթը ոչ միայն ազատում է հանցագործին պատժից, եթե նա գրանցում է ամուսնությունը, այլև չի պաշտպանում աղջկան որպես անչափահաս: Բացի այդ, դատարանը կարող է ճանաչել և իսկապես ճանաչում է համատեղ կյանքը՝ առանց ամուսնության գրանցման, որպես ամուսնական կարգավիճակ, մինչ կողմերի ամուսնության թույլատրելի տարիքի հասնելը: Կրկին, սա թույլ է տալիս բռնաբարություն կատարած անձին խուսափել պատժից:

- *ՀԱՇՏԵՑՈՒՄ*

Անձը չի կարող դատապարտվել հանցագործության համար, եթե նա հաշտվում է զոհի հետ և կատարում է պատճառած վնասի փոխհատուցում՝ առանց հետագայում պետական մարմինների կողմից ստուգման: Հաշտեցումը հաճախ օգտագործվում և չարաշահվում է, որի արդյունքում, սեռական հանցագործություն կատարածները խուսափում են քրեական ցանկացած տեսակի պատիժներից կամ իրենց վարքագծի հետևանքներից (տես Գծապատկեր 3-8): Սա կամ պատժվում է օրենքով (ինչպես օրինակ Մոլդովայում և Ղազախստանում կապված բռնաբարությունների հետ) կամ ոչ պաշտոնապես կիրառվում է դատախազության կողմից հետաքննության ընթացքում, որի դեպքում կարիք չի լինում շարունակելու հետագա

մեղադրանքների հետաքննությունը կամ ներկայացնել նոր մեղադրանքներ, կամ երբ տուժողը հրաժարվում է սեռական հանցանքի վերաբերյալ մեղադրանքից (կամ նրա նկատմամբ կիրառում են սպառնալիք, որպեսզի վերջինս հրաժարվի մեղադրանքից) պատճառաբանելով, որ նա «հաշտվել է» հանցագործի հետ:

- Այլ բացառություններ, որոնք նախատեսված են «պակաս լուրջ» հանցագործությունների համար. *Ակտիվ ապաշխարություն*- անձը չի կարող պատասխանատվություն կրել, եթե նա կամավոր կերպով ընդունում է իր մեղքը, օգնում է հետաքննությանը կամ հատուցում է «վնասը» (սովորաբար գումար տրամադրելով, սակայն «փոխհատուցումը» կարող է ներառել, օրինակ, `վերապրածի/տուժողի բուժման համար վճարելը); *գրավ* - անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա որոշակի գումար կամ անշարժ գույք է գրավ դնում, և որոշակի ժամանակահատված պահպանում է լավ վարքագիծ. և վարչական պատասխանատվությամբ փոխարինում-երբ վարչական պատասխանատվություն է սահմանվում քրեորեն պատժելի արարքի համար: Թեև ներկա քրեական օրենսգրքերի համաձայն, այդ դրույթները կարող են տեսականորեն ազատ արձակել որոշակի քրեական հանցագործություններ կատարած անձանց, մեր հետաքննության մեջ մինչ այժմ չի բացահայտվել որևէ նշանակալի չարաշահում սեռական բռնությունների վերաբերյալ այդ դրույթների մասով:

Թեև այդ դրույթները նախատեսված են նվազ լուրջ հանցագործություններ կատարած անձանց հանդեպ ներողամիտ և մարդասիրական վերաբերմունք ապահովելու համար, նրանք կարող են հանգեցնել անպատժելիության՝ սեռի հիման վրա կանանց և աղջիկների նկատմամբ բռնի հանցագործությունների դեպքում: Անշուշտ, նույնիսկ նման հանցագործությունների դասակարգումը որպես նվազ լուրջ, հանդիսանում են խոչընդոտ սեռական բռնության զոհերի համար պատշաճ արդարության հասնելու համար:

Բռնաբարություն և սեռական բռնության այլ ձևեր՝ սահմանափակ սահմանումներ

Հետխորհրդային երկրներից շատերի քրեական օրենսգրքերում կա սեռական բռնության 3 հիմնական տեսակի հանցագործություններ՝

1. *Բռնաբարություն,*
2. *Սեքսուալ բնույթի բռնի գործողություններ,*
3. *Սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը:*

«Հավասարություն հիմա» կազմակերպությունն իր 2017 թ.-ի՝ «Աշխարհի խայտառակությունը. Գլոբալ բռնաբարության համաճարակը՝ Ինչպես օրենքները չեն պաշտպանում կանանց եւ աղջիկների սեռական բռնությունից ամբողջ աշխարհում» զեկույցում համեմատեց դրանց արդյունքները ՄԱԿ-ի Վիրտուալ գիտելիքների կենտրոնի առաջարկած առաջարկությունների հետ: Այս զեկույցը կրկին համեմատում է այս օրենքները ոլորտի փորձագետների կողմից մշակված ուղեցույցների հետ:

«Հավասարություն հիմա» կազմակերպությունը կարծում է, որ կարևոր է տալ հստակ սահմանումներ այնպիսի հանցագործությունների, ինչպիսիք են բռնաբարությունը, որոնք պատմականորեն օգտագործվել են և շարունակվում են օգտագործվել որպես հայրիշխանության ճնշման և ենթակայության գործիք, հիմնականում կանանց և աղջիկների նկատմամբ, այնպես, որ արտացոլեն նրանց գենդերային բնույթը: Սեռական բռնության մասին բոլոր օրենքները պետք է հավասարապես պատժեն սեռական ներթափանցման բոլոր տիպի գործողությունները և ապահովեն հավասար արդարության մատչելիություն բոլոր վերապրածների համար, անկախ սեռից, սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից, ինչպես նաև անկախ ներթափանցման միջոցներից:

<u>Բռնաբարություն</u>

Հետխորհրդային մի շարք երկրներում բռնաբարությունը սահմանվում է կամ ընկալվում որպես տղամարդու սեռական օրգանի ներթափանցումը կնոջ հեշտոց (նրա կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ կնոջ անօգնական վիճակն օգտագործելով): Բռնաբարության այս սահմանումը, որպես տղամարդու սեռական օրգանի ներթափանցումը կնոջ հեշտոց նույնն է բոլոր իրավահամակարգերում, բացառությամբ Էստոնիայի,

Վրաստանի և Ուկրաինայի[21], որտեղ չկա տարանջատում զոհի սեռով պայմանավորված հանցագործությունների և հարձակման միջոցների միջև (տես Գծապատկեր 1):

<u>Սեքսուալ բնույթի բռնի գործողություններ,</u>

Հետխորհրդային պետությունների օրենքներում «սեքսուալ բնույթի բռնի գործողություն» հասկացությունը նման է բռնաբարությանն այն իմաստով, որ պահանջում է բռնություն, բռնության սպառնալիք կամ զոհի «անօգնական վիճակի» չարաշահում: Այնուամենայնիվ, դա վերաբերում է այն գործողություններին, որոնք կապված չեն տղամարդու առնանդամի ներթափանցմամբ կնոջ հեշտոցի մեջ, այլ տղամադրու առնանդամով կամ առանց դրա այլ բացվածքների մեջ ներթափանցմամբ և կարող է իրականացվել նույն սեռի անձանց կողմից: Բռնաբարության և սեռական բնույթի բռնի գործողությունների համար հոդվածները նախատեսում են գրեթե նույն պատիժները:

<u>Սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը:</u>

Սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելն իր մեջ ներառում է վերոնշյալ գործողություններից բռնաբարությունը և սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, բայց կատարվում է՝ կիրառելով շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերացնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով: Սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը դասակարգվում է որպես նվազ լուրջ հանցագործություն՝ ի տարբերություն բռնաբարության և սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելուն:

---

[21] **Էստոնիա՝** հոդված 141. Բռնաբարություն (1) Սեռական փոխհարաբերություն կամ ցանկացած այլ սեռական ակտ, վերջինիս ցանկությանը հակառակ, ուժի կիրառմամբ կամ օգտագործելով այնպիսի իրավիճակ, երբ այդ անձը ի վիճակի չէ դիմադրություն դարձնել կամ հասկանալ իրավիճակը

Վրաստան: Հոդված 137-Բռնաբարություն

Բռնաբարություն, որը մարդու մարմնի սեռական օրգանների մեջ մարդու մարմնի որևէ մասի կամ առարկայի ներթափանցումն է, բռնություն կիրառելու սպառնալիքի ներքո, բռնություն կիրառելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակի չարաշահմամբ ……

Հոդված 138. Սեռական բնույթի մեկ այլ գործողություն

1. Սեռական բնույթի մեկ այլ գործողություն, որը չի պարունակում սույն օրենսգրքի 137-րդ հոդվածով հանցագործության տարրերը, կատարված բռնություն կիրառելու սպառնալիքի ներքո, բռնություն կիրառելու սպառնալիքի կամ տուժողի անօգնական վիճակի չարաշահմամբ …

Ուկրաինա: Հոդված 152-Բռնաբարություն

1. Սեռական բնույթի գործողություն, կապված ուրիշի մարմին հեշտոցային, անալ կամ օռալ ներթափանցմամբ՝ սեռական օրգանների կամ ցանկացած այլ առարկայի կիրառմամբ՝ առանց տուժողի համաձայնության:

Ii. Հանցագործության տարրերը

Բռնություն

Բռնությունը եւ բռնության սպառնալիքը, որպես բռնաբարության տարրեր՝

մեկնաբանվում են որպես ֆիզիկական միջոցներով, ոչ թե հոգեբանական կամ տնտեսական վնաս, կամ հարկադրանքի այլ ձև: Բացի այդ, բռնության սպառնալիքը պետք է լինի անհապաղ, որպեսզի լինի հանցագործության տարր: Ապագա բռնության սպառնալիքները, անկախ նրանից, թե որքան լուրջ են, չեն դիտարկվում: Նման սպառնալիքները նախկինի պես շարունակվում են դիտարկվել որպես հարկադրանք[22] և կլինեն քրեորեն պատժելի, բայց ավելի քիչ չափով, իսկ երբեմն նույնիսկ առանց ազատազրկման կիրառման: Բացի այդ, սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու հանցագործությունը կարող է ավելի շատ ազատվել քրեական պատասխանատվությունից/պատժից:

Տուժողի «անօգնական վիճակը» ընդգրկված է սեռական բռնության մասին հոդվածներում՝ որպես հանցագործի կողմից բռնության պահանջի լրացուցիչ, այլընտրանքային տարր: Այն չի բնորոշվում որպես հարկադրանք կամ հարկադրանքի հանգամանքներ, ինչպես դա արված է միջազգային չափանիշներում, և փաստացի սահմանվում է միայն որոշ իրավահամակարգերի օրենքներում:[23]

---

[22] Օրինակ, Վրաստանի Քրեական օրենսգիրքը սահմանում է հարկադրանքը հետեւյալ կերպ. «Անձի գործողության ազատության անօրինական սահմանափակում, այսինքն՝ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք՝ որոշակի գործողություն կատարելու կամ չկատարելու համար, որի իրականացումը կամ իրականացումից խուսափելը հանդիսանում է վերջինիս իրավունքը կամ անձի պարտադրումը փորձելու այդ ազդեցությունը հակառակ իր կամքին »(150-րդ հոդված):

[23] Հայաստան (հոդված 138) «անօգնական վիճակում գտնվող է համարվում այն անձը, որը որոշակի հանգամանքների ուժով մշտապես կամ ժամանակավորապես զրկված է եղել հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու կամ հասկանալու հնարավորությունից, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը:

Մոլդովա (հոդված 171). «Օգտվելով տուժողի՝ ինքն իրեն պաշտպանելու անկարողությունից կամ արտահայտելու իր կամքը» ...

Էստոնիա (§141). (1) Սեռական փոխհարաբերություն կամ ցանկացած այլ սեռական բնույթի ակտի իրականացում, անձի հետ նրա կամքին հակառակ ուժի միջոցով կամ օգտագործելով այնպիսի իրավիճակ, երբ այդ անձը ի վիճակի չէ դիմադրություն ցուցաբերել կամ հասկանալ իրավիճակը ... Հոդված 147. 10 տարին չլրացած անձի անկարողությունը գիտակցելու

Սույն բաժնում նախատեսված հանցագործությունների համար անձը համարվում է անգիտակից, եթե նա 10 տարեկանից պակաս է:

Ռուսաստան. Գերագույն դատարանի Բարձրագույն խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 16 որոշման, 5-րդ պարբերության համաձայն `«Երբ մարդը իր ֆիզիկական կամ մտավոր վիճակի պատճառով (դեմենսիա կամ այլ մտավոր խանգարումներ, ֆիզիկական հաշմանդամություն, այլ հիվանդություն կամ անգիտակցություն), տարիքի (անչափահաս կամ տարեց մարդ) կամ այլ հանգամանքների պատճառով չի կարող

Այնուամենայնիվ, այս պրակտիկան նույնն է բոլոր իրավահամակարգերում. «Անօգնական վիճակը» այն վիճակն է, որը թույլ չի տալիս զոհին հասկանալ այն գործողությունների իմաստը, որոնց նրանք ենթարկվում են, կամ դիմադրել այդ գործողություններին տարբեր պատճառներով, ինչպիսիք են տարիքը, հաշմանդամությունը, մտավոր վիճակը, ալկոհոլի կամ թմրանյութերի ազդեցության տակ գտնվելը և այլն:

Տուժողի կողմից դիմադրության բացակայությունը, եթե դա կապված չէ «անօգնական վիճակ» այս ավանդական հասկացության հետ, նշանակում է, որ հանցագործությունը չի դասակարգվի որպես բռնաբարություն: Փաստորեն, ինչպես լրացուցիչ բռնության պահանջի, այնպես էլ «անօգնական վիճակի» դրույթների համաձայն, օրենքը նշում է, որ պատասխանատվությունն ընկած է տուժողի վրա, որ սեռական բռնության զոհը ցուցաբերի դիմադրություն, ոչ թե այն հանցագործի, որ չկատարի սեռական բռնություն: Այն նաև անտեսում է բազմաթիվ այլ պատճառներ, որի պատճառով տուժողը չի կարող դիմակայել, օրինակ, եթե նա գտնվել է շատ մեկուսացված վայրում, զգացել է, որ նա կարող է ստանալ այլ վնասվածքներ դիմակայելով /փախչելով կամ պարզապես վախից կաթվածահարվել է, որպեսզի թվարկի անուններ:

«ՄԱԿ-կանայք» ուղեցույցները նշում են, որ բռնաբարության և սեռական բռնության մասին օրենքները չպետք է պահանջեն լրացուցիչ ուժի առկայության ապացույց, քանի որ բռնաբարությունն ինքնին բռնի գործողություն է, և լրացուցիչ բռնությունը պետք է համարել ծանրացուցիչ գործոն, որը նույնպես համապատասխանում է Ստամբուլի Կոնվենցիային:

<u>Ազատ եւ իրական համաձայնության բացակայություն</u>

Չնայած նշված միջազգային և տարածաշրջանային չափանիշներին, վերանայված օրենքները չեն ներառում տուժողի կամավոր և իրական համաձայնության բացակայությունը որպես սեռական հանցագործությունների անբաժանելի մաս (տես Գծապատկեր N1): Տարածաշրջանում նման տեսակի օրենքին համապատասխան, Ուկրաինայի քրեական օրենսգրքի դրույթները, որոնք ուժի մեջ են մտել 2019 թվականի հունվարի 11-ին, սահմանում

հասկանալ իր հանդեպ կատարվող գործողությունների նշանակությունը և բնույթը կամ դիմակայել հանցագործին»:»:

են սեռական հարաբերությունը առանց տուժողի համաձայնության որպես բռնաբարություն: Այնուամենայնիվ, օրենքը դեռ չի նախատեսում, որ այդ համաձայնությունը պետք է լինի կամավոր, անկեղծ և իրական, և այն պետք է գնահատվի շրջակա միջավայրի հանգամանքների համատեքստում, ինչպես նշված է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում (CEDAW) եւ Ստամբուլի կոնվենցիայում, և որոնք սկսում են մշակվել այլ երկրների կողմից, ինչպիսիք են Շվեդիան, ի պատասխան քրեական արդարադատության համակարգի անկարողությանը պատշաճ կերպով հասկանալու և հետապնդելու բռնաբարությունը:

Կամավոր համաձայնության կարևորության ժխտման հետ մեկտեղ, սեռական բռնության վերաբերյալ վերանայված օրենքները չեն նշում հարկադրական հանգամանքների լայն շրջանակներ, որոնք կարող են կաթվածահարել տուժողի կամքը և գործողությունները, ինչպես օրինակ, վստահության և իշխանության չարաշահումը, ինչպես նաև կախվածության իրավիճակները, ինչպես նկարագրված է վերևում, ինչպես նաև կեղծիքը: Այս խնդիրները որոշակի չափով որոշվում են նվազ լուրջ հանցագործության հետ կապված «*Սեռական հարաբերության մեջ մտնելուն հարկադրելը»:* ՄԱԿ-ի կանանց ուղեցույցները նշում են, որ օրենքները պետք է ապահովեն այնպիսի հանգամանքների լայն շրջանակ, որի համաձայն համաձայնությունը անէական է, օրինակ՝ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից սեռական բռնության ենթարկվելը, օրինակ ուղղիչ հաստատություններում, կամ դպրոցում, կամ որոշակի մասնագիտական հարաբերություններ ունեցող անձանց կողմից, վերապրածին սեռական բռնության ենթարկելը, ինչպիսին է մշտական հարաբերություններ հոգեթերապևտի և հիվանդի միջև, և նախատեսել հարկադրված համաձայնության լայն շրջանակներ, ինչպիսիք են ահաբեկելը կամ խարդախությունը:

Չնայած Սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրաբար ներգրավելու հանցագործությունը իրապես բերում է հարկադրանքի որոշ օրինակներ, սակայն այն չի բնորոշում համակողմանի դրա բնույթը: Բացի այդ, տվյալ հանցագործությունը համարվում է նվազ լուրջ, քան բռնաբարությունը և, հետևաբար, խատեսում է ավելի մեղմ պատիժ, ինչպես նաեւ արդարացման ավելի մեծ հնարավորություններ: Ուսումնասիրված 15 պետություններից 9-ում հանցագործները կարող

են անպատիժ մնալ, եթե նրանք հաշտվեն այդ հանցագործության զոհի հետ (տես Գծապատկեր N6):

Ընդհանուր առմամբ, այդ օրենքների սահմանումները զգալիորեն ցածր են, քան սեռական բռնության սահմանումների և չափանիշների վերաբերյալ համաձայնեցված միջազգային նկարագրությունները, որոնք նախատեսված են ապահովելու արդարություն օրենքի ցանկացած խախտման դեպքում:

Գ. Առաջարկություններ

- Փոփոխություններ կատարել քրեական օրենսգրքերում այնպես, որպեսզի դրանք թույլ չտան, չնախատեսեն սեռական բնույթի հանցագործությունների դեպքերով պատասխանատվությունից խուսափելու համար վարույթի ցանկացած փուլում պաշտոնական կամ ոչ պաշտոնական հիմքով լինի «հաշտեցում» կամ «փոփոխվող հանգամանքների հետևանքով սոցիալական վտանգավոր բնույթի կորուստ» հասկացությունները:
- Ապահովել, որպեսզի սեռական բռնության հանցագործությունների սահմանումները համապատասխանեն Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային (CEDAW) և Ստամբուլի կոնվենցիային և ներառեն սեռական բնույթի բոլոր գործողությունների տեսակները, որոնք կատարվել են առանց տուժողի կամավոր, անկեղծ կամ իրական համաձայնության պայմաններում և հարկադրական հանգամանքների լայն շրջանակներում:
- Ապահովել, որ սեռական բռնության մասին օրենքները դիտարկեն սեռական ներթափանցման բոլոր ձևերը, որպես համապատասխան ծանրության հանցանքներ:

4. Ապահովել, որ սեռական բռնության (բռնաբարություն, սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը, սեռական հարաբերությունը տասնվեց տարին չլրացած անձի հետ (statutory rape), անչափահասի բռնաբարություն), հանցագործությունների համար նախատեսված պատժամիջոցները

համահունչ են նման գործողությունների ծանրությանը՝ դասակարգելով սեռական հանցագործություններն ավելի լուրջ կատեգորիայում:

II. Արդարադատության համակարգն աշխատում է ի վնաս վերապրածի/տուժողի-խտրական Error! Bookmark not defined.

Ա. **Error! Bookmark not defined. Սեռական հիմքով կատարված հանցագործությունների հետաքննության և դատական քննության գործընթացների ուսումնասիրում և հետազոտում մարդու իրավունքների միջազգային չափանիշների շրջանակներում**

Պարտադիր հետաքննություններ

Ինչպես ընդգծել է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովը (CEDAW)[24] իրավապահ մարմինների աշխատակիցները հաճախ թույլ են տալիս, որպեսզի կարծրատիպերը ազդեն քննությունների և դատավարությունների վրա, հատկապես սեռի հիմքով կատարված բռնությունների դեպքերում: Կան ապացույցներ խմբերի կողմից, ովքեր ուղղակիորեն աշխատում են զոհերի հետ, ըստ որի օրենքն ըստ պատշաճի չի գործում և/ կամ դիմումատուն պարտավոր է նախաձեռնել եւ անգամ իրականացնել դատավարական հետաքննություն իր իսկ գործով: Սա խոսում է այն մասին, որ իրավական համակարգը գտնվում է լուրջ կարծրատիպերի ներքո, ըստ որի տղամարդը-առանձին անհատ է, իսկ կինը կրողն է իր համայնքի այսպես ասած «պատվի», ովքեր կրում են ամոթ ցանակացած սեռական բնույթի գործողության համար, եթե անգամ դրանք եղել են բռնի ուժով: Այնուամենայնիվ, միջազգային և տարածաշրջանային չափանիշները, այդ թվում «Ստամբուլի կոնվենցիան»,[25] հստակորեն նշում են, որ իշխանությունները պետք է լրջորեն արձագանքեն սեռի հիմքով բռնության բոլոր դեպքերին, ներառյալ, ի պաշտոնե (*ex officio)* քրեական հետապնդում իրականացնելու ճանապարհով (պետության կողմից)՝

[24] Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողով (CEDAW) C/GC/33 Գլխավոր Հանձնարարականներ N:33, կանանց արդարադատության մատչելիության վերաբերյալ ,¶ 27

[25] Տես Եվրոպայի Խորհրդի՝ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Կոնվենցիայի հոդված 55(***Ստամբուլի Կոնվենցիա),*** *ex-parto և ex-office ընթացակարգեր:*

արդարադատություն ապահովելու նպատակով:[26] Քանի որ սեռական բռնությունը հատկապես խոցելի է, նման ստանդարտների նպատակն է ապահովել, որ տուժողները չկրեն երկարատև քրեական դատավարության բեռը, և մեղավորները բերվեն արդարադատության:

Ինչպես նշել է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովը (CEDAW) իր 35-րդ ընդհանուր հանձնարարականում՝ պետությունները պետք է. «Ապահովեն տուժողների արդյունավետ մուտքը դատարաններ և տրիբունալներ. ապահովել իշխանություններին, որպեսզի պատշաճ կերպով արձագանքեն կանանց նկատմամբ գենդերային բռնության բոլոր դեպքերին, ներառյալ՝ կիրառելով քրեական օրենք և հարկ եղած դեպքում ի պաշտոնե (*ex officio)* դատական հետապնդում՝ հանցագործներին արդար, անկողմնակալ, ժամանակին և արագ ձևով պատասխանատվության ենթարկելու և համապատասխան պատժամիջոցներ կիրառելու նպատակով»:[27] Պետությունները պետք է նաև «ապահովեն, որ կանանց նկատմամբ գենդերային բռնությունը պարտադիր չէ, որ ընդգրկված լինի վեճերի լուծման այլընտրանքային գործընթացներում, ներառյալ միջնորդությունը և հաշտեցումը»:[28]

Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովի (CEDAW) հետաքննությունը Ղրղզստանում հարսերի առևանգման գործով (2018) ցույց տվեց, որ պետությունը պետք է անհապաղ ձեռնարկի միջոցառումներ, որպեսզի բռնաբարությունը դասակարգվի որպես ծանր հանցագործություն և դրա նկատմամբ սկսվի ի պաշտոնե (*ex officio)* հետապնդում:[29]

Կանանց հանդեպ բռնության պարտադիր հետաքննության կարևորությունն ընդգծվել է նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից: Օփուզն ընդդեմ Թուրքիայի գործով դատարանը հայտարարել է, որ ելնելով հանցագործության ծանրության աստիճանից՝ իշխանությունները պետք է դիտարկեն գործը որպես հասարակական հետաքրքրություն,

[26] Տես, Կանանց եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց թիվ 279, http://rm.coe.int/16800d383a հասցեով,

[27] Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե (CEDAW) (CEDAW) C/GC/35, Կանանց նկատմամբ գենդերային բռնության վերաբերյալ թիվ 35 ընդհանուր հանձնարարական, թիվ 19 ընդհանուր առաջարկը, ¶ 44:

[28] Id. at ¶ 45

[29] Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե, Ղրղզստանի գործով հարցով, կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն, 2018 թվականի սեպտեմբերի 21, CEDAW / C / OP.8 / KGZ / 1, para. 92.a ..

նույնիսկ այն դեպքում, երբ տուժողը հետ է վերցնում իր բողոքը:[30] Թեև գործը մասնավորապես վերաբերում է ընտանիքում բռնությանը, այդ սկզբունքները կարող են կիրառվել կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի նկատմամբ, ներառյալ ընտանիքում կամ ցանկացած այլ իրավիճակում իրականացվող սեռական բռնությունը:

Սեռա-զգայուն գործընթաց

Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովը (CEDAW) արդարության հասնելու ճանապարհին կարևորել է սեռա-զգայուն գործընթացների դերակատարումը, հայտարարելով որ «քրեական արդարադատության համակարգի միջոցով կանանց կրկնակի զոհ դարձնելը ազդում է նրանց արդարադատության մատչելիության վրա՝ կապված նրանց մտավոր և ֆիզիկական բռնության խոցելիության և ձերբակալման, հարցաքննության և կալանավորման ժամանակ սպառնալիքների ավելացմամբ»:[31] Այդ պատճառով Կոմիտեն խորհուրդ է տալիս, որպեսզի կառավարությունները «արդյունավետ միջոցներ ձեռնարկեն, որպեսզի կանայք պաշտպանվեն կրկնակի զոհ դառնալուց՝ համագործակցելով իրավապահ մարմինների եւ դատական իշխանությունների հետ»[32]

Խոշտանգումների և կրկնակի խոշտանգումների դեպքերից խուսափելու համար Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (CEDAW) նաեւ խորհուրդ է տալիս, որ երկրները հարցաքննության, ապացույցների հավաքման և հետաքննության հետ կապված այլ ընթացակարգերում կիրառեն «զաղտնի և սեռա-զգայուն մոտեցում»:[33]

ՄԱԿ-ի կանանց ուղեցույցը նաեւ նախատեսում է, որ պետությունները պետք է արգելեն տուժողի սեռական պատմության օգտագործումը որպես ապացույց սեռական բռնության դեպքերով գործերի ժամանակ, իսկ Ստամբուլի Կոնվենցիան հաստատում է, որ

---

[30] Օփուզն ընդդեմ Թուրքիայի, N: 33401/02, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2009 թ. Հունիսի 9, ¶¶ 139 եւ 145:

[31] Ibid 17 at ¶ 48.
[32] Id. at ¶ 51(c).
[33] Id. at ¶ 51(g).

սեռական հարաբերությունների անցյալի հետ կապված ապացույցները թույլատրելի ճանաչվեն կամ գնահատվեն միայն այն դեպքերում, երբ դրանք վերաբերելի են գործին և անհրաժեշտ:[34]

Պ.Մ.-ն ընդդեմ Բուլղարիայի գործով, որի դեպքում 15 տարի պահանջվեց իշխանություններին դեռահասի բռնաբարության գործի հետաքննության համար, Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը որոշեց, որ քննության անարդյունավետությունն իրենից ներկայացնում է անմարդկային եւ անարժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում):[35] Բացի այդ, Դատարանը Յ.Վ. ընդդեմ Սլովենիա գործով ճանաչեց, որ սեռական բռնության զոհի կողմից Դատարանում վերապրած տառապանքն ու նվաստացումը, արաձանագրեց Եվրոպական կոնվենցիայի (հոդված 8) խախտում և հայտնեց, որ «խաչաձև քննությունը» չպետք է օգտագործվի որպես վախեցնելու և նվաստացնելու միջոց»:[36] Պետությունները պետք է նաև «ստեղծեն նպաստավոր միջավայր, որը խրախուսում է կանանց պաշտպանել իրենց իրավունքները, հաղորդել նրանց դեմ կատարված հանցագործությունների մասին և ակտիվորեն մասնակցել քրեական արդարադատության գործընթացներին, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել, որպեսզի վերացվի այն կանանց հանդեպ վրեժը, ովքեր փնտրում են արդարադատություն»:[37]

[34] Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին (*Ստամբուլի Կոնվենցիա),* Հոդված 54

[35] Պ.Մ. ընդդեմ Բուլղարիա, գործ թիվ 49669/07, ՄԻԵԴ 028 (2012), հունվարի 24, 2012:

[36] Յ.Վ. ընդդեմ Սլովենիա, Մարդու Իրավունքների Եվրոպական դատարան, 28 Մայիս 2015 ¶ 108.

[37] Ibid 17 at ¶ 51(d).

ԽՈՒՍԱՓԵԼ ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՑՈՒՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԾԱՆՐԱՑՈՒՑԻՉ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻՑ

Մարդու իրավունքների միջազգային ստանդարտները ընդունում են, որ ծանրացուցիչ ապացույցների ներկայացման պահանջները զրկում են կանանց արդարադատության մատչելիությունից: Դրան դեմ պայքարելու համար, Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (CEDAW) խորհուրդ է տալիս պետություններին «վերանայել ապացուցման կանոնների բեռը՝ ապահովելու կողմերի հավասարությունը բոլոր ոլորտներում, որտեղ իշխանության հարաբերությունները զրկում են կանանց իրենց գործի արդար դատավարության հնարավորությունից»:[38] Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (CEDAW) նշում է, որ ապացուցման կանոնները և դրանց կիրառումը, հատկապես կանանց նկատմամբ բռնության դեպքերում, պետք է վերանայվեն և միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ ապահովելու, որպեսզի ապացույցների պահանջները չլինեն չափազանց սահմանափակ, խոցելի կամ կախված չլինեն գենդերային կարծրատիպերից:[39] ՄԱԿ-ի կանանց ուղեցույցը նաև առաջարկում է, որ սեռական բռնության վերապրածի հայտարարության հաստատման պահանջը արգելվի պետությունների կողմից:

Փոխհատուցումը չպետք է կիրառվի սեռական բռնությունների համար:

ՄԱԿ-ի Կանանց ուղեցույցը նշում է, որ սեռական բռնության դեպքերում երրորդ անձանց միջնորդությունը (մեդիացիա) պետք է արգելվի գործընթացի բոլոր փուլերում: Ուղեցույցի համաձայն, սեռական բռնության դեպքերում պետք է արգելվի նաև հարցի լուծման համար ֆինանսական կարգավորումը կամ ամուսնությունը:

Լավ Պրակտիկա

Մարդու իրավունքներին վերաբերող ցանկացած տարածաշրջանային և միջազգային պարտավորություններից բացի, հետխորհրդային երկրները պետք է հաշվի առնեն բռնության և սեռական բռնության իրավունքի ոլորտում մարդու իրավունքների համապատասխան չափանիշները, որպես օգտակար նյութ իրենց քրեական օրենսգքրի բարեփոխման

[38] Ibid 17 at 15(g).
[39] Ibid 17 at 51(h).

աշխատանքների ընթացքում: Ինչպես նշվեց վերևում, դրանցից հիմնականը Կանանց եւ աղջիկների հանդեպ բռնության վերացման վերաբերյալ ՄԱԿ-ի Վիրտուալ տեղեկատվական կենտրոնն է՝ սեռական բռնության վերաբերյալ օրենսդրության հիմնական տարրերը: Համապատասխան հիմնական տարրերը թվարկված են ստորև և կարող են բռնաբարությունների և սեռական բռնությունների վերաբերյալ ազգային օրենքներում փոփոխություններ կատարելու աշխատանքներին հաղորդել լրացուցիչ ջանքեր:

Սեռական բռնության սահմանումը, ի թիվս այլ բաների,

- Չպետք է համարվի հանուն պատվի կամ բարոյականության կատարված հանցագործություն,
- Չպետք է պահանջի……ուժ,
- Քրեականացնել սեռական բռնությունները, հարկադրանքը ինտիմ հարաբերություններում
- Մեղադրյալի վրա դնել տուժողի համաձայնություն տալու մասին ապացույցի բեռը,
- Սահմանել այնպիսի հանգամանքների լայն շրջանակ, որոնց դեպքում համաձայնությունը էական չէ, օրինակ, ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից սեռական բռնության ենթարկվելը, օրինակ ուղղիչ հաստատություններում, կամ դպրոցում, կամ որոշակի մասնագիտական հարաբերություններ ունեցող անձանց կողմից, վերապրածին սեռական բռնության ենթարկելը, ինչպիսին է մշտական հարաբերություններ հոգեթերապևտի և հիվանդի միջև,
- Սահմանել հարկադրական համաձայնության լայն շրջանակ, օրինակ ահաբեկելը կամ խարդախությունը,
- Ապահովել սեռական բռնի հարկադրանքի գործերով պարտադիր հետաքննություն,
- Արգելել ցանկացած պահանջ տուժողից ապացույցներ ներկայացնելու մասով,
- Արգելել տուժողի սեռական պատմության օգտագործումը որպես ապացույց սեռական բռնության դեպքերով քրեական կամ քաղաքացիական գործերի ժամանակ,

- Արգելել երրորդ անձանց միջնորդությունը (մեդիացիա) գործընթացի ցանկացած փուլում,
- Արգելել սեռական բռնության հարցի լուծման համար ֆինանսներով կարգավորումը կամ ամուսնությունը:
- Պարտադիր ուսուցում իրավական, դատական, բժշկական և սոցիալական ծառայությունների աշխատակիցների համար,
- Սեռական բռնությունների տարածվածության վերաբերյալ տեղեկությունների պարտադիր հավաքում, որը բաժանված կլինի ըստ սեռի, ռասայի, տարիքի, հարձակման վայրի և հարձակման տեսակների:[40]
- Պարտադրել ծրագրերի իրականացնում, որոնք կտեղակացնեն հասարակությանը սեռական բնույթի բռնի գործողությունների վերաբերյալ, ինչպես նաև
- Սեռական բնույթի բռնի գործողությունների վերաբերյալ տվյալների պարտադիր հավաքագրում և մշտադիտարկում (մոնիթորինգ):

Բռնաբարությունների գործերով հետաքննությունների ընթացքում առկա պրակտիկայի խնդիրները բարձրաձայնվել են Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի (CEDAW) կողմից Մոլդովայի նկատմամբ կատարված ուսումնասիրությունների եզրափակիչ դրույթներում: 2013թ.-ին Կոմիտեն խորհուրդ տվեց, որպեսզի պետությունը «ապահովի, որ սեռական բռնությունների գործերով հետաքննությունները, այդ թվում, մոլդովացի կին փախստականների նկատմամբ կատարված բոլոր քննությունները կատարվեն հետաքննության միջազգային ստանդարտներին համապատասխան, ներառյալ՝ բռնաբարության և սեռական բնույթի բռնի գործողությունների հետաքննության վերաբերյալ առկա ուղեցույցներում փոփոխություններ մտցնելով»:[41]

---

[40] Բաժանված վիճակագրական տվյալների հավաքագրման կարևորությունը, որը պետք է հնարավորություն ընձեռի մոնիտորինգին, նույնպես ընդգծվում է CEDAW կոմիտեի կողմից, թիվ 35 ընդհանուր հանձնարարականի մեջ, կետ 49.

[41] ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե (CEDAW), Մոլդովայի Հանրապետության միասնական 4-րդ եւ 5-րդ պարբերական զեկույցների վերաբերյալ եզրակացություններ, 2013 թ. Հոկտեմբերի 29, CEDAW / C / MDA / CO / 4-5, պարբերություն 20.դ.

Բ. Խնդիրներ տեղական օրենքների և պրակտիկաների հետ

Բացահայտելով նախկին ԽՍՀՄ երկրներում սեռական բռնության հետաքննության եւ դատական գործընթացների հետ կապված հարցերը:

Ամբողջ հետխորհրդային տարածքում տարածված է սեռական բռնություն կատարած անձանց անպատժելիությունը, ինչը պայմանավորված է ինչպես օրենսդրությունում, այնպես էլ պրակտիկայում առկա խոչընդոտների հետ: Սահմանափակ դեպքերում, երբ սկսվում է սեռական բռնության հանցագործության հետաքննությունը, այն հաճախ ավարտվում է տուժողի հետ «հաշտեցմամբ», տուժողի կողմից բողոքից հրաժարվելով (տարբեր պատճառներով, այդ թվում՝ խարանի, սոցիալական ճնշման, համակարգի հանդեպ վստահության բացակայություն, վախ, ոստիկանության կողմից ճնշման առկայություն), հանցագործի դեմ ցուցմունք տալուց հրաժարվելով, կամ այն պատճառով, որ իրավապահ մարմինները որևէ «հանցագործության նշաններ» չեն հայտնաբերել:

Իրավահամակարգերի մեծամասնության մեջ ամբողջությամբ գործունակ չափահասների նկատմամբ սեռական հանցագործությունների հետաքննությունը նախաձեռնվում է միայն տուժողի պահանջով (այսպես կոչված մասնավոր կամ պետական-մասնավոր հետապնդում, տես Գծապատկեր N2): Սովորաբար մասնավոր մեղադրանքի դեպքում գործը սկսվում է այն պահից, երբ տուժողը բողոք է ներկայացնում և կրում է ապացույցներ հավաքելու բեռը: Գործի վարույթի ընթացքում ցանկացած պահի տուժողը կարող է հաշտություն կնքել իրավախախտի հետ և դադարեցնել վարույթը: Պետական-մասնավոր մեղադրանքի դեպքում, տուժողը նույնպես ներկայացնում է բողոքում, սակայն մեղադրանքի հիմնական պատասխանատվությունը դատախազի վրա է: Շատ օրենքների համաձայն, տուժողը չի կարող տեխնիկապես դադարեցնել վարույթը դատավարությունը սկսվելուց հետո: Սակայն, գործնականում, տուժողը սովորաբար կարող է հետ վերցնել բողոքը: Թույլատրվում է արդյոք նրան դա անել և երբ, կախված է երկրից:

Պետական մեղադրանքը, մյուս կողմից, ենթադրում է, որ հանցագործության հետաքննությունը և քրեական հետապնդումը կախված չէ տուժողի բողոքից: Գրավոր օրենքի համաձայն, նախաքննություն պետք է իրականացվի յուրաքանչյուր ենթադրյալ

հանցագործության մեղադրանքի առնչությամբ, ինչպես նաև քրեական հետապնդումը կատարվում է՝ հաշվի առնելով հասարակական շահը (հանցագործության լրջությունը)՝ անկախ տուժողի ցանկություններից: Հանցագործի դեմ տուժողի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելը չի կարող հիմք հանդիսանալ հետաքննության դադարեցման համար:

Վերոնշյալ համակարգերը հանգեցնում են հետևյալ խախտումների, երբ խոսքը վերաբերում է սեռական բռնության հետաքննությանը և հետապնդմանը՝

Չկա պարտադիր հետաքննության պահանջ սեռական բնույթի բռնի հանցագործությունների դեպքում

Ուսումնասիրվող երկրներից 10-ում իշխանությունների կողմից սեռական բռնությունը ավտոմատ կերպով ուսումնասիրելու և դատական հետապնդման պահանջի բացակայությունը, խոչընդոտում է այդ երկրներում սեռական բռնության համար արդարադատության մատչելիությունը (տես՝ Գծապատկեր 2): Ակնհայտ է, որ սեռական բռնության ենթարկողներին պատասխանատվությունից ազատող ամենից հաճախ խախտված իրավական դրույթները, հանդիսանում են այնպիսիք, որոնք թույլ են տալիս հանցագործության հետաքննությունը սկսել միայն տուժողի բաց դիմում-բողոքով և հետաքննությունն ավարտել տուժողի կողմից բողոքից հրաժարվելու դեպքերում: Սա թույլ է տալիս տեղական իրավապահ մարմիններին հետ համոզել կանանց՝ նման բողոքներ ներկայացնելուց և հետաձգել գործի քննության սկիզբը՝ ակնկալելով գործնականում, որ կինն այս կան այն կերպ կհրաժարվի իր բողոքից: Իրավական համակարգի կողմից լուրջ ուշադրության պակասը և վերապրածի/տուժողի կողմից մեղադրանքի ընթացքում ապացույցների հավաքագրման բեռը նույնպես հանգեցնում է սեռական բռնության զոհին ենթարկվելու ճնշման իրավախախտի, իրավախախտի ընտանիքի անդամների, տուժողի ընտանիքի և շրջապատի անդամների կողմից, ինչպես նաև իրավապահ մարմինները, փաստաբանները և նրա գործով ներգրավված բժիշկները հորդորում են բողոք չներկայացնել կամ հետ վերցնել բողոքը: Բացի այդ, շատ դեպքերում, բռնաբարության զոհը չունի բավարար իրավասություն մասնավոր մեղադրանքի համար հետվնասվածքային սթրեսային վիճակի և (կամ) իրավական աջակցության բացակայության պատճառով: Նույնիսկ այն դեպքերում, երբ

նման մասնավոր մեղադրանքներ են ներկայացվում, նման գործերի մեծամասնությունը կարճվում է:

Երբ տուժողը ցանկանում է հետ վերցնել բողոքը հանցագործի հետ «հաշտվելու» կամ ցանկացած այլ պատճառաբանությամբ, քննիչը գրեթե անմիջապես կարճում է վարույթը «հանցանքի հետքերի բացակայության» պատճառով՝ առանց հետագա հետաքննության իրականացման: Նման իրավիճակ կարող է տեղի ունենալ նաև վարույթի ցանկացած փուլում:

Սեռական բռնության համար պարտադիր հետաքննությունը միշտ չէ, որ արդարություն է առաջացնում:

Այն երկրներում, որտեղ օրենքը նախատեսում է, որ սեռական բռնությունը ենթակա է պետական մեղադրանքի, գործնականում հետաքննությունը և հետապնդումը դեռևս հիմնականում իրականացվում են մասնավոր դատավարության կանոններին համապատասխան - շատ բան կախված է այն հանգամանքից, թե արդյոք զոհը նախաձեռնողական է և արդյոք նա պետք է տրամադրի ապացույցներ և տեղեկատվություն, ի տարբերություն նմանատիպ ծանրության այլ հանցագործությունների:

Փոքր քաղաքներում և գյուղերում ոստիկանները հաճախ հանդիսանում են հանցագործների ընկերները կամ նույնիսկ հանցագործների հարազատները և չեն ցանկանում կամ հրաժարվում են բռնաբարության դեպքերի հետաքննություն սկսելուց, քանի որ դա բացասաբար կանդրադառնա հանցագործների / հանցագործների ընտանիքների հետ փոխհարաբերությունների վրա:

Երբ բռնաբարության գործով հետաքննություն է սկսվում, այն հաճախ ավարտվում է տուժողի համար անհայտ պատճառներով կամ քննությունը դեռևս երկար տարիներ գտնվում է ընթացքի մեջ, բայց այն օգտագործվում է այն նպատակով, որպեսզի լրանա գործի վաղեմության ժամկետը և գործի վարույթը կասեցվի: Պետական մեղադրանքի երկրներում, որտեղ հետաքննությունը համարվում է պարտադիր, գործնականում քննիչները / դատախազները դեռևս փորձում են փակել գործը, եթե ցանկացած պատճառաբանությամբ զոհը չի կարողանում ակտիվորեն աջակցել քրեական հետապնդմանը և մեղադրանքին:

Նման դեպքերում քննությունը փակվում է դատախազի որոշմամբ, որտեղ նշում է, որ «որեւէ հանցագործության ապացույցներ» չեն հայտնաբերվել: Ինչպես մասնավոր և պետական-մասնավոր մեղադրանքների դեպքում, գործնականում բազում դեպքերում ապացույցների ներկայացման բեռը ընկնում է տուժողի վրա, իսկ դատախազը միշտ պետք է պատասխանատվություն կրի արդար դատաքննության և պատշաճ արդարադատության ապահովման համար: Դա նաև նշանակում է, որ միայն մի քանի գործեր են ստանում վերջնական հանգուցալուծում և արդարադատություն, ինչպես նաև պաշտոնապես գրանցվում են որպես այդպիսին, ինչը խաթարում է խնդրի մասշտաբը և նվազեցնում է այնպիսի հավանականությունը, որ մարդկային կամ ֆիզիկական ռեսուրսներ կհատկացվեն սեռական բռնության դեմ պայքարի գործում:

Չնայած ուսումնասիրվող երկրները չեն հավաքում այս հարցի վերաբերյալ տարրալուծված տվյալներ, կարծես թե սեռական բռնության դեպքերի միայն շատ փոքր մասն է, որոնք կատարվել են առանց լրացուցիչ փաստացի ֆիզիկական ուժի կիրառման, հասնում են դատական կարգով հանգուցալուծման փուլի: Տեղական փորձը շեշտում է, որ սեռական բռնության բոլոր ձևերը՝ հարկադրաբար սեռական ակտ ունենալուց մինչև բռնաբարություն, որոնք կատարվել են բռնության սպառնալիքների կամ հարկադրանքի այլ ձևերի կիրառմամբ, որոնք կապված չեն ֆիզիկական ուժի հետ, գործնականում մեծապես անտեսվում են իրավապահ մարմինների կողմից: Սա հանգեցնում է նրան, որ կամ մերժվում է հետապնդման վարույթի հարուցումը, կամ պետական իրավապահ մարմիններում մերժվում է հետաքննություն նախաձեռնելը: Եթե նման գործերը հասնում են դատարաններին, ապա դատավճիռների կայացման հավանականությունը գրեթե բացակայում է դատարանների կողմից հաստատված ապացույցների ներկայացման նկատմամբ ցուցաբերվող ծանր պահանջների պատճառով: Նույնիսկ այն դեպքերում, երբ բռնաբարության արդյունքում առկա են ֆիզիկական վնասվածքներ, դատարանները երբեմն պահանջում են սեռական հարաբերություն հաստատող կենսաբանական ապացույցներ, և, եթե դրանք բացակայում են, ապա մեղադրյալը արդարացվում է: Նույնիսկ այն դեպքերում, երբ ԴՆԹ-ի փորձաքննությունը և այլ ապացույցների հավաքումը անվճար է և տրամադրվում է դատախազության մարմինների կողմից (օրինակ, Վրաստանում), կարող են նաև լինել ապացույցների հավաքագրման գործընթացում ուշացումներ:

Iii. Գենդերային կարծրատիպերը և կրկնակի զոհը՝ որպես արդարության լրացուցիչ խոչընդոտներ

Շատ պետություններում տեղական իշխանությունները հաղորդում են, որ չեն հավատում զոհերի ցուցմունքին կամ հայտարարություններին: Հաճախ անհավատությունը կանանց հանդեպ կարծրատիպային և խտրական վերաբերմունքի արդյունք է: Տուժողը հաճախ մեղադրվում է բռնաբարությունը «հրահրելու» համար: Բացի այդ, երբ նույն զոհը ենթարկվել է բռնության մի քանի ձևերի, օրինակ, ընտանիքում բռնության համատեքստում, հանցագործը, ամենայն հավանականությամբ, մեղադրվում է այնպիսի հանցագործությունների համար, որոնք չեն հանդիսանում սեռական բռնություն, որն այնուհետև անտեսվում է:

Հետխորհրդային երկրներից շատերը չունեն գենդերային զգայուն մեթոդաբանություն բռնաբարության դեպքերի հետաքննության համար, ինչը նշանակում է, որ կանայք և աղջիկները ընթացքում կարող են ենթարկվել կրկնակի բռնության, և մեղադրանքի համար անհրաժեշտ և համապատասխան ապացույցներ կարող են չհավաքվել: Հանցանքը հետաքննվում է ընդհանուր մեթոդաբանության օգտագործմամբ, որն ընդգրկում է բոլոր քրեական հանցագործությունները, որոնք հանգեցնում են տարբեր անհաջողությունների, ներառյալ մեղադրանքների ներկայացման բավարար ապացույցների բացակայությունը, քանի որ բռնաբարության առանձնահատկությունները չեն ուսումնասիրվում, օրինակ, չկա ճանաչում, ըստ որ սեռական բռնության վնասվածքը կարող է հանգեցնել հակասական հայտարարությունների, որ կարծրատիպերի վրա հիմնված համակարգում կա կողմնակալություն կամ, որ հանցագործության բնույթը հավանական է, որ բացառի ապացույցներ տրամադրելու հնարավորությունը և չի կարող հանգեցնել մարմնական վնասվածքների:[42]

Ամբողջ տարածաշրջանում չկան բավարար քանակի կին ոստիկաններ և քննիչներ: Բռնաբարությունների հետաքննությունները հաճախ իրականացվում են տղամարդկանց կողմից, ինչը էլ ավելի է խոցում կանանց և աղջիկներին, ստեղծում է հաղորդակցման համար

[42] Նոյեմբերի 19-ի որոշմամբ (գործ N253- -15), բռնաբարության փորձ կատարելու մասին, Վրաստանի Գերագույն դատարանը հայտարարել է, որ բռնաբարությունը հանցագործություն է, որը, ըստ էության, չի կարող ունենալ շատ վկաներ: Հետեւաբար, հատկապես կարեւոր է գնահատել տուժողի հայտարարության համապատասխանությունը, դրա հետ կապը այլ ապացույցների հետ եւ որեւէ պատճառի բացակայություն, որը կարող է դատարանի մոտ կասկած հարուցել զոհի արժանահավատությալ վերաբերյալ (պարբերություն 3):

խոչընդոտ: Տուժողի սեռական պատմությունը, ինչպես նաև նրա հարաբերությունների կարգավիճակը հանցագործի հետ հաճախ դառնում են վարույթի բոլոր փուլերում մանրամասն քննության առարկա և գիտակցաբար կամ այլ կերպ գնահատվում են արդյոք նա «արժանի» զոհ է և արդյոք նա իսկապես վնասվել է բռնաբարությունից: Իրավիճակի վերաբերյալ ցածր «գնահատականը» կարող է հանգեցնել իրավախախտի վրա կիրառվող ավելի մեղմ պատիժների:

Չնայած այն հանգամանքին, որ սեռական բռնության հետ կապված հանցագործությունների վերաբերյալ վարույթները քննվում են դռնփակ դատական նիստերին, բոլոր կողմերի՝ տուժողի, հանցագործի և այլ վկաների, գաղտնիության կարգի խախտումը (այդ թվում՝ քննության ընթացքում հարցաքննության ժամանակ) լայնորեն տարածված են, հատկապես քննության փուլում, խախտումները, մեծամասամբ գյուղերում կամ փոքր քաղաքներում: Բացի այդ, սեռական բռնության բոլոր դեպքերում տուժողին կրկնակի զոհ դարձնելը չի հանդիսանում ինչ-որ արտասովոր մի բան, քանի որ տուժողը հաճախ բազմիցս հարցաքննվում է տարբեր պաշտոնյաների կողմից, որոնք հաճախ օգտագործում են սեքսիստական եւ նվաստացուցիչ արտահայտություններ, հարցաքննության ժամանակ:

Սեռական բռնությունների հանցագործություններից փրկված անձինք հաճախ չունեն հնարավորություն օգտվելու անվճար իրավաբանական օգնությունից քրեական ողջ գործընթացի ընթացքում, ներառյալ հոգեբանական և սոցիալական օգնությունը և անվտանգ կացարանի հնարավորությունից: Այս գործոնները, ինչպես նաև սեռական բռնության երկարատև ու ամոթալի քրեական հետապնդումը, շատ անգամներ նպաստում են վերապրածի անցանկությանը սեռական բռնության հետ կապված հանցագործությունների համար արդարության ձգտելու ցանկությունից:

Գ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետության կողմից ապահովել պարտադիր հետաքննություն և դատական հետապնդում:

● Կատարել փոփոխություններ քրեական օրենսգրքերում, ապահովելու համար, որ սեռական հանցագործությունները (բռնաբարություն, սեռական բռնություն, հարկադիր սեռական հարաբերություն) պետության կողմից ենթակա լինեն պարտադիր հետաքննության

և դատական հետապնդման (ex officio, հանրային հետապնդում): Հետևաբար, համոզվեք, որ քրեական օրենսգրքերը բացառում են այդ հանցագործությունների համար մասնավոր կամ պետական-մասնավոր հետապնդումը (կիրառելի է Ադրբեջանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Լիտվայի, Ռուսաստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Ուկրաինայի եւ Ուզբեկստանի համար);

Քաղաքականության և պրակտիկայի բարելավում

ապահովել, որ սեռական հանցագործությունների բոլոր ձևերը դիտարկվեն որպես հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցեր, որոնք պետք է հետաքննվեն և դատական կարգով հետապնդվեն որպես առաջնահերթություն,

ճանաչել սեռական հանցագործությունների առանձնահատկությունը և ապահովել սեռական բռնության հետաքննության և քրեական հետապնդման մեթոդաբանություն, որը հաշվի է առնում գենդերային ասպեկտները՝ ազատված ցանկացած կարծրատիպից, ներառյալ հաշմանդամության, էթնիկության կամ սեռական կողմնորոշումից, ներառյալ ապացույցների և վկաների հավաքագրման առումով, հարցաքննության գործընթացների հստակություն;

Ապահովել, որ տուժողի կողմից ցումունք տալուց հրաժարվելը կամ ցուցմունքը հօգուտ հանցանք կատարածքի փոխելը պատճառ չհանդիսանա այն եզրակացության համար, որ «հանցագործության մասին որևէ ապացույց» չի հայտնաբերվել, կամ հանդիսանա պաատճառ սեռական հանցագործությունները հետաքննելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու համար (կիրառելի է պետական մեղադրանքի պետությունների համար),

Վերացնել ապացույցների ներկայացման ծանրացուցիչ պահանջները, որոնք գործնականում կիրառվում են հանցագործին մեղադրելու կամ դատապարտելու համար (օրինակ՝ ներթափանցման կամ դիմադրության ցուցաբերման ապացույց),

ապահովել, որ արձանագրված սեռական բռնության յուրաքանչյուր գործողություն արձանագրվի հանցագործությունների պաշտոնական արձանագրություններում, ինչպես նաև հավաքագրել վիճակագրական տվյալներ և կատարել դրանց բաժանում ըստ տուժողի, կամ հանցագործի սեռի, տարիքի և ցանկացած խոցելի կարգավիճակի,

Բացառել հանցագործների անպատժելիությունը սեռական բնույթի հանցագործությունների վարույթի ցանկացած փուլում հաշտության համաձայնություն կնքելու միջոցով,

Դատավարության ողջ ընթացքում սեռական բռնության զոհերին տրամադրել համարժեք աջակցություն, ներառյալ՝ անվճար իրավաբանական օգնություն, հոգեբանական և սոցիալական օգնություն տրամադրելով և ապահով կացարանի ապահովմամբ:

III. Հետագա վնասը սեռական բռնության ենթարկված աղջիկ-դեռահասներին

Ա. Մարդու իրավունքի միջազգային չափանիշներ

Աղջիկներին սեռական բռնությունից պաշտպանելու ուսումնասիրություն՝ մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն ճանաչել է, որ մասնավորապես, երեխայի (կամ կնոջ) սեռական բռնության դեպքերում, պետք է ոչ մի ճնշում չգործադրվի վերջիններիս նկատմամբ, որպեսզի նրանք ամուսնանան իրենց բռնաբարողի կամ իրենց նկատմամբ բռնի գործողություն կատարած անձի հետ, որը, ինչպես նշում է Կոմիտեն, ոչ միայն կարող է բռնի գործողություն կատարած անձին ազատել պատասխանատվությունից, այլև արդյունավետորեն նվազեցնում է տուժողի համար օրենքով թույլատրված ամուսնության նվազագույն տարիքը:[43]

Չկա միջազգային կամ տարածաշրջանային որևէ պայմանագիր, որտեղ կսահմանվի սեռական հարաբերություն ունենալու իրավական տարիքը, այդպիսով թողնելով խնդրի լուծումը առանձին պետությունների հայեցողությանը: Այնուամենայնիվ, Երեխայի

[43] «Հավասարություն հիմա», «Աղջիկների պաշտպանություն, օրենքի կիրառումը Երեխաների դաղարեցման համար, վաղ եւ հարկադիր ամուսնությունը և դրա հետ կապված մարդու իրավունքների ոտնահարումները» (2014): հղում անելով Մարդու իրավունքների կոմիտեին, CCPR / C / 21 / Rev.1 / Add.10, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 28, «Տղաների եւ կանանց միջեւ հավասարության իրավունք» (հոդված 3):

իրավունքների մասին կոնվենցիայում «երեխա» սահմանումը սահմանվում է որպես «մինչև տասնութ տարեկան յուրաքանչյուր անձ, եթե միայն, օրենքին համապատասխան, երեխայի չափահասությունը չի նախատեսվում ավելի վաղ»: Թեև համաձայնության համար համընդհանուր ընդունված տարիք չկա, այնուամենայնիվ պարզ է, որ պետությունների կողմից սահմանված համաձայնության տարիքին համապատասխան երեխային սեռական գործողությունների մեջ ներգրավելը արգելվում է ցանկացած հանգամանքներում, անկախ այն բանից, թե արդյոք երեխան «տվել է իր համաձայնությունը» այդ գործունեության համար, թե ոչ: Բացի դրանից, ՅՈՒՆԻՍԵՖ-ի միջգերատեսչական աշխատանքային խումբը երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնությունից պաշտպանելու վերաբերյալ իր տերմինային ուղեցույցներում շեշտում է, որ պետությունները պետք է «քրեականացնեն 18 տարեկանից ցածր երեխաների սեռական շահագործման բոլոր ձևերը և հաշվի առնեն ցանկացած ենթադրյալ «համաձայնություն» շահագործական կամ հարկադիր գործողությունների մեջ ներգարվելու համար և ընդունենք այդ համաձայնությունը որպես «անվավեր»:[44] Նմանօրինակ կերպով «ՄԱԿ Կանայք» զեկույցն ասում է, որ օրենսդրությունը պետք է սահմանի «երեխա» տերմինը բոլոր քրեական օրենսգրքերում և բոլոր այլ օրենսդրություններում, որպես 18 տարեկանից ցածր անչափահաս:

Բ. Խնդիրներ տեղական օրենքների և պրակտիկայի հետ

Սեքսուալ բռնություններից աղջիկներին պաշտպանելու խնդիրների ուսումնասիրում Եվրասիայում տեղական օրենքների եւ պրակտիկայի շրջանակներում:

Սեռական հարաբերություն անչափահասի հետ (statutory rape) և անչափահասի բռնաբարում

Հետխորհրդային պետությունների քրեական օրենսգրքերը տարբերում են սեռական հարաբերություն անչափահասի հետ **(statutory rape)** երկկողմանի համաձայնությամբ և

[44] ՅՈՒՆԻՍԵՖ-ի միջգերատեսչական աշխատանքային խումբը, «Երեխաների պաշտպանության Տերմինաբանական ղեկավար ուղեցույցներ սեռական շահագործումից եւ սեռական բռնությունից» էջ 5: 7 (հունվարի 28, 2016), հասանելի է https://www.unicef.org/protection/files/Terminology_guidelines_396922-E.pdf հասցեով:

անչափահասի բռնաբարություն՝ կատարված բռնության, բռնության սպառնալիքի կամ տուժողի անօգնական վիճակի օգտագործմամբ: Ավելին, շատ երկրներում օրենքներ նախատեսում են օրենքով ամրագրված բռնաբարության համար պատասխանատվությունից ազատում («հաշտեցման» ճանապարհով, հանցագործության սոցիալական վտանգավոր բնույթի կորստի հետևանքով կամ դատավարական բանակցություններից հանցագործների ազատում, տես Գծապատկեր N5): Սեռական հարաբերությունն անչափահասի հետ **(statutory rape)** օրենքի կամ պրակտիկայի տեսանկյունից դիտարկվում է բարոյականության համատեքստում և ավելի քիչ դիտարկվում է որպես անչափահասի սեռական կյանքի անձեռմխելիության իրավունքի կոպիտ ոտնահարում: Այս հանցագործության կատարողը կարող է լինել միայն 18 տարեկանից բարձր չափահաս անձը:

Անչափահասի հետ սեռական հարաբերության հանցագործությունը բնութագրվում է որպես չափահասի կողմից սեռական հարաբերություն այն անձի հետ, ում 16 տարեկանը դե չի լրացել (Էստոնիայում դա 14 տարեկանն է): Հանցագործությունը կարող է կատարվել միայն այն անձի կողմից, ով 18 տարեկան է կամ դրանից բարձր եւ ով գիտի, որ տուժողը 16 տարեկանից ցածր է (կամ 14 տարեկան համապատասխանաբ): Հոդվածից ենթադրվում է, որ անչափահասը համաձայնվում է, ցանկանում է կամ նույնիսկ նախաձեռնում է սեռական հարաբերություն: Անչափահասին առաջարկվում է պաշտպանություն միայն տարիքի հիման վրա:

Որոշ իրավահամակարգեր սահմանափակում են անչափահասի հետ սեռական հարաբերության **(statutory rape) համար օրենքով սահմանված պատասխանատվությունը**՝ հիմք ընդունելով հանցագործի և տուժողի տարիքային եւ/կամ «հասունության» նմանությունը:[45] Որոշ իրավահամակարգերում գոյություն չունի նվազագույն տարիքային

---

[45] **Աղրբեջան**. Քրեական պատասխանատվություն, սույն օրենսգրքի 152-րդ հոդվածով նախատեսված (Անչափահասի հետ սեռական հարաբերության՝ *statutory rape*) կամ 153-րդ (*անառակաբարո գործողություններ*) հոդվածով նախատեսված հանցագործությունների համար նախատեսվում է, **եթե այդ հանցագործությունները կատարած անձի տարիքի եւ տուժողի տարիքի միջև տարբերությունն ավելի քան երկու տարի է:**
Լիտվա, հոդված 151.1 Սեռական ցանկությունների բավարարում՝անչափահասների ազատությունը սեռական ինքնորոշման եւ (կամ) անչափահասների անձեռնմխելիության խախտմամբ 5. Սույն հոդվածի 1-ին կետում նշված գործողությունները չեն համարվում հանցագործություն, **եթե չկա զգալի տարիքային, մտավոր եւ ֆիզիկական զարգացվածության, հասունության տարբերություն գործողության մասնակիցների միջև**:
Մոլդովա. Հոդված 174. Սեռական փոխհարաբերությունը 16 տարին չլրացած անձի հետ, 2) 1-ին կետում նշված գործողությունը կատարած անձը քրեական պատասխանատվություն չի կրում, եթե նա **տուժողի հետ մոտ է տարիքային, ֆիզիկական եւ մտավոր զարգացման տեսանկյունից:**

սահմանափակում (ենթադրվում է, որ ցանկացած տարիքի փոքր կարող է համաձայնել սեռական հարաբերություն ունենալու համար), եւ համապատասխան պատիժները միշտ չէ, որ ավելի ծանր են երիտասարդ զոհերի/տուժողների հետ համեմատ: Օգտագործելով այն արդարացումը, ըստ որի գոյություն չունի վճիռների դասակարգում կախված հանցագործի և տուժողի տարիքներից, ինչպես նաև չցանկանալով վնաս տալ հանցագործի ապագայի հեռանկարներին՝ դատախազներն ու դատավորները հաճախ չեն ցանկանում իրական պատժամիջոցներ կիրառել մեղավորների հանդեպ, հատկապես, եթե տուժողը 15 տարեկան է, իսկ մեղավորը սովորաբար երիտասարդ պատանի է: Օրինակ, Վրաստանում նման դեպքերում ընթացակարգային համաձայնություններն ու հաշտություններն իրականում թողնում են հանցագործներին առանց որևէ իրական պատժի:

Անչափահասի հետ սեռական հարաբերությունը **(statutory rape)** երբ դա կատարվում է փաաստացիորեն, գործնականում (de facto) կամ կրոնական պատկանելության ընտանիքի ձևավորման համատեքստում, դա տարածաշրջանի բազմաթիվ երկրներում ամենաչզեկուցվող և անպատիժ հանցագործությունն է: Նման դեպքերում իշխանությունները ազատում են հանցագործներին, քանի որ իրենց ընդհանուր կամ կոնկրետ օրենսդրությանը համապատասխան, թույլատրվում է «հաշտեցում» կամ դատախազն իր հայեցողությամբ չի սկսում կամ դադարեցնում հետաքննությունը/հետապնդումը. կամ, եթե գործը հասնում է դատական հետապնդմանը, դատարանները դատավարական գործընթացում ձեռքբերված պայմանավորվածությունների կամ այլ պատճառներով հանցագործների նկատմամբ որևէ իրական պատիժ չեն սահմանում: Սա ազդանշան է հաղորդում, ըստ որի անչափահասի հետ սեռական հարաբերությունը **(statutory rape),** եթե նրա նպատակը ընտանիք ստեղծելն է, բոլորովին էլ հանցագործություն չէ և որ կարելի է բանակցությունների արդյունքում հասնել նրան, որ հանցագործը ազատվի իրական պատիժից: Չի ներկայացվում ոչ մի մեղադրանք անչափահաս աղջկա հանդեպ դաժան վերաբերմունքի համար, կամ շարունակական դաժան վերաբերմունքի, ինչպես նաև իրավունքների բացակայությունից, որին հանդիպել նա կարող է այսպես կոչված «ամուսնությունում»: Նույնիսկ այն դեպքում, երբ ընտանիք կազմելու մտադրություն չկա, անչափահասի հետ սեռական հարաբերությունը **(statutory rape)** չի կարող

Ռուսաստան. Հոդված 134. Սեռական հարաբերություն եւ սեռական բնույթի այլ գործողություններ տասնվեց տարին չլրացած անձի հետ: 2. Եթե զոհի եւ մեղադրյալի միջեւ տարիքային տարբերությունը չորս տարուց պակաս է, վերջինս չի կարող պատժվել ազատազրկմամբ, սույն հոդվածի առաջին մասով կամ սույն օրենսգրքի 135-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված հանցագործության համար:

մեղադրվել, եթե աղջիկը կույս չի եղել, այն պատճառաբանությամբ, որ նրա «մաքրության» բացակայությունը նշանակում է, որ սեռական հարաբերությունը նրան վնաս չի պատճառել և, հետևաբար, նա արժանի չէ պետական պաշտպանության:

Մյուս կողմից, ***անչափահասի բռնաբարությունը*** կատարվում է, եթե հանցագործը կիրառել է բռնություն, բռնության սպառնալիք կամ չարաշահել է զոհի անօգնական վիճակը: Այն նախատեսում է ավելի ծանր պատիժ, քան անչափահասի հետ սեռական հարաբերությունը **(statutory rape)**, քանի որ ենթադրվում է, որ ակտը կատարվել է անչափահասի կամքին հակառակ, անօրինական միջոցների կիրառմամբ: Որքան երիտասարդ է տուժող անչափահասը, այնքան ավելի ծանր է պատիժը:

Երբ դեռահաս աղջիկը բռնաբարվում է (և նույնիսկ այն դեպքում, երբ հանցագործը չի պատրաստվում ընտանիք կազմել), հետաքննությունը գրեթե միշտ սկսվում է անչափահասի հետ սեռական հարաբերություն ունենալու փաստով, այլ ոչ բռնաբարությամբ, քանի որ դատախազության համար ավելի հեշտ է ապացուցել անչափահասի հետ սեռական հարաբերությունը: Հակառակ դեպքում նրանք ստիպված կլինեն հավաքել ապացույցներ լրացուցիչ բռնության կամ հարկադրանքի այլ ձևերի վերաբերյալ: Այս պրակտիկան անտեսում է տուժողի հնարավոր բռնության կամ հանցագործից կախվածություն ունենալու հանգամանքները, ինչպես նաև հետագայում դեռահաս աղջիկների համար դառնում է խարան, կարծրատիպ, ըստ պատշաճի և ադեկվատության ընկալելու հանցանքի ծանրության աստիճանը: Արդյունքում, սույն հոդվածի համաձայն, դեռահաս աղջիկը կարող է «համաձայնվել» կամ «նախապես խնդրել» ունենալու համար սեռական հարաբերություն: Նրան կարելի է դիտարկել որպես անկարգի կամ «գայթակղողի», ով, չնայած սոցիալական կարգերին ու նորմերին, ունենում է սեռական հարաբերություններ՝ այդպիսով պատվազրկելով իր ընտանիքը: Սա կարող է զրկել տուժողին ունենալու իր ընտանիքի եւ շրջապատի աջակցությունը: Նա իր վրա է վերցնում մեղքը, մինչդեռ հանցագործը հաճախ ազատվում է տուգանքի դիմաց:

Բռնաբարության զոհ դարձած դեռահաս աղջիկները հաճախ խարազանվում են, դառնում են ծաղրի առարկա իրենց շրջապատներում և հեռացվում են դպրոցից, եթե նրանք ամուսնանում են, ինչը զրկում է նրանց իրենց մարդու իրավունքներից, ներառյալ «կրթության իրավունքից»

Ii. Հարսի առևանգումներ եւ հարկադիր ամուսնություններ:

Մանկամուսնությունները և հարսի առևանգումները[46] դեռևս ոչ հազվադեպ երևույթներ են Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Ղազախստանում, Ղրղզստանում,[47] Ռուսաստանի հյուսիսային Կովկասի տարածաշրջաններում, Տաջիկստանում, Թուրքմենստանում և Ուզբեկստանում:[48] Հայաստանում եւ Վրաստանում վերջին տասնամյակների ընթացքում հարսի առեւանգման պրակտիկան մեծապես անհետացել է, չնայած որոշ համայնքներում դեռևս մնացել են նման չհաղորդվող միջադեպեր: Հարսի առեւանգումները և հարկադիր ամուսնությունները անհամաչափ կերպով ազդում են ուսումնասիրվող շատ երկրների դեռահաս աղջիկների վրա և հանգեցնում են նրանց դեմ ուղղված սեռական բռնության հանցագործությունների աճին: Միևնույն ժամանակ, մանկամուսնությունները անհամաչափ կերպով ավելի շատ ազդում է աղջիկների վրա, քան՝ տղաների:

Բոլոր հետխորհրդային երկրներում, մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան, ամուսնության տարիքը 18 տարեկանն է (որոշ բացառություններով), չնայած որ այն չի խանգարում, որպեսզի գրանցվեն ավելի ցածր տարիքի ամուսնություններ կրոնական հիմքի վրա և համատեղ կյանքով ապրող (de facto) ընտանիքին՝ առանց ամուսնությունը գրանցելու: Կրոնական և չգրանցված (de facto) ամուսնությունները տարածաշրջանում շատ տարածված են[49] և նրանք ամուսիններին չեն տալիս որևէ իրավական պաշտպանություն, հատկապես սեփականության և ժառանգության առումով:

Որոշ երկրների իրավահամակարգեր հարսի առևանգումը եւ հարկադիր ամուսնությունը դիտարկում են որպես առանձին հանցագործություններ-Ադրբեջան, Վրաստան (հարկադիր ամուսնություն, բայց ոչ հարսի առևանգում), Ղրղզստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուկրաինա և Ուզբեկստան, կամ դրանք առանձնապես

---

[46] Հարսի առեւանգումը վնասակար պրակտիկա է, որն իր մեջ ներառում է կնոջը կամ աղջկան առևանգելը իր կամքին հակառակ, խաբեության կամ բռնության միջոցով եւ ենթարկում է նրան ֆիզիկական, հոգեբանական կամ սեռական բռնության կամ հարկադրանքի, որպեսզի ստիպի նրան ամուսնանա առևանգիչի հետ:

[47] Տես կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Ղրղզստանի նկատմամբ կատարված հետաքննությունը՝համաձայն Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին կոնվենցիայի 8-րդ հոդվածի, 2018 թվականի սեպտեմբերի 21-, CEDAW / C / OP.8 / KGZ / 1:

[48] Տես օրինակ տեղեկատվություն ՄԱԿ-ի Մարդկանց բնակչության հիմնադրամից (ՄԱԲՀ) հասանելի՝ https://eeca.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Child%20Marriage%20EECA%20Regional%20Overview.pdf

[49] Id.

հիշատակվում են ստրկության կամ մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ քրեական հոդվածների դրույթներում, ինչպես, օրինակ, Էստոնիայում և Մոլդովայում: Մյուս իրավահամակարգերում, որտեղ հարսի առևանգումը հատուկ քրեականացված չէ, օրինակ, Ղազախստանում և Ռուսաստանում, հարսի առևանգման քրեական գործը քննվում է/հետապնդվում է որպես առևանգման գործ, որը երբեմն չի հանգեցնում քրեական պատասխանատվության, եթե տուժողը ազատվում է որոշակի ժամանակահատվածում, եթե հիարկե չկան ապացույցներ, որ հանցագործը կատարել է մեկ այլ հանցագործություն: Եթե առևանգման ընթացքում կատարվում է սեռական բռնության բնույթի ցանկացած հանցագործություն, ապա դրանք հաճախ չեն հետաքննվում:

Նույնիսկ եթե կա հնարավորություն հետաքննելու հարսի առևանգման և հարկադիր ամուսնությունների գործերը՝առևանգման և հարկադրանքի վերաբերյալ ընդհանուր իրավական դրույթներին համապատասխան, արդարության առավել մատչելիության համար կարևոր է, որ դրանք դասակարգվեն որպես առանձին հանցագործություններ, համաձայն Ստամբուլի Կոնվենցիայի: Այս հանցագործությունների հետապնդումը այլ ընդհանուր հոդվածների դրույթների հիման վրա հանգեցնում է նրան, որ այդ խախտումների տարածվածության վերաբերյալ չեն լինում համապատասխան վիճակագրական տվյալներ, քանի որ դրանք հաշվի են առնվում նույն հոդվածներով կատարված այլ հանցագործությունների հետ միասին: Նման իրավիճակներում նաև առավել հավանական է, որ հետաքննող մարմինները այդ հանցագործություններին չվերաբերեն որպես անհանգստություն առաջացնող դեպքերի և հետաքննություն և դատական հետապնդում անցկացնեն առանց գենդերային գործոնները հաշվի առնելու, որոնք բացասական ազդեցություն են թողնում վերապրածների համար արդարադատության մատչելիության ճանապարհին:

Հարսի առևանգումը հաճախ ուղեկցվում է բռնաբարությամբ, որը օգտագործվում է որպես միջոց՝տուժողի հեռանալը կանխելու համար: Հարսի առևանգումը սովորաբար ավարտվում է աղջկա ամուսնությամբ իրեն առևանգածի հետ, որովհետև նա այլ ելք չունի և հետագայում նրա ամուսնության հնարավորությունները զգալի կրճատվում են, եթե գիշերը մնա հանցագործի տանը: Նման իրավիճակներում ենթադրվում է, որ ձևավորվել է «ընտանիք», և, հետևաբար, բռնաբարության գործ չի հարուցվում, այսինքն, հարկադիր

ամուսնությունը, բացի այն որ անտեսվում է, նաև արդյունավետորեն արդարացնում է բռնաբարությունը:

Գ. Առաջարկություններ

● ապահովել, որ հարկադիր ամուսնությունը և հարսի առևանգումը ուղղակիորեն քրեականացվեն քրեական օրենսգրքով,

● Ապահովել, որ անչափահասի հետ սեռական հարաբերության **(statutory rape) համար** օրենքով սահմանված պատժամիջոցները ամբողջությամբ հաշվի առնեն զոհերի եւ մեղավորների տարիքային տարբերությունները, և այդ պատժամիջոցները լինեն համաչափ կատարած հանցանքի հետ,

●հետաքննել անչափահասների բռնաբարության բոլոր դեպքերը որպես բռնաբարություն եւ չնվազեցնել անչափահասի հետ սեռական հարաբերության **(statutory rape)** համար օրենքով սահմանված պատիժը, եթե կան ապացույցներ, որոնք փաստում են բռնաբարության վերաբերյալ:

● Այն դեպքերում, երբ կիրառելի է, բացառել անչափահասի հետ սեռական հարաբերության **(statutory rape)** համար մեղադրվողի հետ վեճի լուծման ընթացակարգային բանակցությունների տարբերակը, որոնց նպատակն է սահմանել ավելի մեղմ պատժատեսակ:

IV. Ավելացող խոցելիություն – ավելացող անարդարություն սեռական բռնության նկատմամբ

Խոցելի խմբերին վերաբերող միջազգային պաշտպանության մեխանիզմների եւ մարդու իրավունքների չափանիշների ուսումնասիրում:

Ա.Մարդու իրավունքների միջազգային չափանիշներ

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (CEDAW) ընդունում է, որ սեռի հիմքով կատարվող բռնությունը կարող է ազդել որոշ կանանց վրա տարբեր կերպ և տարբեր աստիճանի, քան մյուսների վրա, որն արդյունքն է նրանց՝ սեռի,

ռասայի, մաշկի գույնի, սոցիալ-տնտեսական կարգավիճակի, լեզվի, կրոնի կամ հավատքի, քաղաքական կարծիքի, ազգային ծագման, ամուսնական և / կամ մայրական կարգավիճակի, տարիքի, քաղաքային/գյուղական իրավիճակի, առողջական վիճակի, հաշմանդամության, սեփականության իրավունքի, սեռական կողմնորոշման, անգրագիտության, թրաֆիքինգի զոհ լինելու, զինված հակամարտության, ապաստան հայցողի, փախստականի, ներքին տեղահանվածի, քաղաքացիություն չունեցողի, փախստականի, տնային տնտեսության, այրիության, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրողների, մարմնավաճառությամբ զբաղվելու և այլնի: Հետևաբար, քանի որ կանայք բախվում են խտրականության տարբեր և խաչվող ձևերի, որոնք էլ ավելի են խորացնում բացասական հետևանքները, կանանց այս խմբերի համար անհրաժեշտ է համապատասխան իրավական և քաղաքական արձագանքման միջոցներ ձեռնարկել:[50] Բացի այդ, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (CEDAW) կոչ է անում պետություններին զեկուցել հաշմանդամություն ունեցող կանանց կոնկրետ խնդիրների լուծմանն ուղղված հատուկ միջոցների մասին:[51]

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան կոչ է անում բոլոր մասնակից պետություններին «արդյունավետ կերպով կիրարկել օրենսդրություն և իրականացնել ռազմավարություն՝ այդ թվում կանանց ու երեխաներին վերաբերող օրենսդրություն և ռազմավարություն, որպեսզի ապահովվի հաշմանդամություն ունեցող անձանց դեմ կիրառված շահագործման բռնության կամ դաժան վերաբերմունք ցանկացած դեպքի բացահայտումը, հետաքննումը, անհրաժեշտության դեպքում նաեւ դատապարտումը: Այն նաև կոչ է անում մասնակից պետություններին հաշմանդամություն ունեցող անձանց մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովել արդարադատության մատչելիությամբ՝ տրամադրելով նաև ընթացակարգային ու տարիքին համապատասխան այնպիսի հնարավորություններ, որոնք հնարավորություն կտան ապահովելու նրանց արդյունավետ մասնակցությունը:

Երեխաների իրավունքների կոմիտեն, իր Ընդհանուր Մեկնաբանություն № 9-ի մեջ հայտարարում է, որ հաշմանդամություն ունեցող երեխաները հինգ անգամ ավելի շատ են

[50] Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողով, CEDAW C / GC / 35, Կանանց նկատմամբ սեռի հիմքովբռնության վերաբերյալ 35-րդ Ընդհանուր հանձնարարական, թիվ 19, թիվ 12 ընդհանուր առաջարկի թարմացում:

[51] Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողով,Ա/46/38, հաշմանդամություն ունեցող կանանց վերաբերյալ ընդհանուր հանձնարարական N:18

ենթարկվում չարաշահման և որ «հաշմանդամություն ունեցող աղջիկները հաճախ ավելի խոցելի են խտրականության հանդեպ՝ սեռային խտրականության հիման վրա»: Կոմիտեն նաև հորդորում է մասնակից պետություններին «հատուկ ուշադրություն դարձնել հաշմանդամություն ունեցող աղջիկների նկատմամբ՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ և, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ միջոցներ, որպեսզի նրանք լավ պաշտպանված լինեն, օգտվեն բոլոր ծառայություններից և լիովին ինտեգրվեն հասարակությանը»: ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (CEDAW) ընդունում է նաև մարմնավաճառության մեջ ընդգրկված աղջիկների ու կանանց առավել խոցելիությունը՝ հատկապես սեռական բռնության հանդեպ: Հանձնաժողովը հայտնում է, որ կանանց որոշ խմբեր, այդ թվում՝ մարմնավաճառությամբ զբաղվող կանայք, անհամաչափ կերպով ենթարկվում են պատժամիջոցների (քրեականացման), որոնք խոչընդոտում են վերջիններիս արդարադատության մատչելիությունը:[52] Մարմնավաճառությամբ զբաղվող կանայք և աղջիկները պետք է պաշտպանված լինեն բռնաբարությունից և բռնության այլ ձևերից՝ օրենքի կողմից հավասար պաշտպանության իրավունք ունենալու սկզբունքի հիման վրա:[53]

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (CEDAW) մտահոգություն է հայտնել, որ որոշ երկրներում մարմնավաճառությամբ զբաղվող կանայք են ենթարկվում պատասխանատվության, այլ ոչ թե հաճախորդները, կազմակերպիչները, երրորդ անձինք, ում համար շահեկան է մարմնավաճառությունը,[54] օրինակ, կոմիտեն կոչ է անում Ռուսաստանի Դաշնությանը՝ հեռացնել մարմնավաճառության մասին դրույթը Վարչական Իրավախախտումների մասին Օրենսգրքից և ստեղծել վերահսկող համակարգ, որը կդիտարկի բռնությունը, այդ թվում, ոստիկանության կողմից, մարմնավաճառությամբ զբաղվող կանանց նկատմամբ:[55]

---

[52] Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողով, CEDAW/C/GC/33, կանանց արդարադատության մատչելիության վերաբերյալ ընդհանուր հանձնարարական N: 33

[53] Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողով, A/47/38, ընդհանուր հանձնարարական N: 19, Կանանց հանդեպ բռնություն ¶ 15.

[54] Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովի զեկույցը, քսանչորսերորդ նստաշրջան (15.01-02.02.2001) և քսանհինգերորդ նստաշրջան (02.07-20.07.2001) Եգիպտոսի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումները (346-րդ պարբերություն), Գայանա (180-181-րդ պարբերություններ), Գվինեա (137-րդ պարբերություն), Ա / 56/38., Չինաստանի համար CEDAW / C / CHN / CO / 6 (2006) ¶ 19:

[55] Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողով, եզրափակիչ դիտարկումներ Ռուսաստանի Դաշնության համար CEDAW/C/RUS/CO/8, 2015, ¶¶ 25-26.

Բ. Խնդիրներ տեղական օրենքների և պրակտիկայի հետ

Նախկին ԽՍՀՄ երկրներում սեռական բռնությունից խոցելի խմբերի պաշտպանության խնդիրների ուսումնասիրություն:

Ուսումնասիրվող բազմաթիվ օրենքների համաձայն, կանանց և հաշմանդամություն ունեցող աղջիկներին բռնաբարելը ավելի խիստ է պատժվում, քան հաշմանդամություն չունեցողին բռնաբարելը: Չնայած դրան, հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները, հատկապես ուսման հետ դժվարություն ունեցողները կամ հոգեկան խանգարումներ ունեցողները, սեռական բռնության հետևանքով արդարության հասնելու ճանապարհին բախվում են մի շարք խոչընդոտների: Դրանք ներառում են բավարար միջոցների բացակայություն (ներառյալ տեխնիկական), սեռական բռնության մասին իրավապահ մարմիններին հաղորդելու համար: Իրավապահ մարմինների գիտելիքների պակասը՝ հաշմանդամություն ունեցող կանանցից (ինչպես նաև ուսուցման դժվարություններ ունեցող կամ հոգեկան խանգարումներ ունեցող կանանցից) վկայություն ձեռք բերելու հարցում, և այս գործընթացում հաշմանդամությանը և գենդերային հավասարությանն առնչվող նախապաշարմունքների առկայություն, ինչը բազմիցս հանգեցնում է մեղավորների անպատժելիությանը:

Որքան առավել խոցելի է ընդհանուր իրավիճակը, ինչպես գերակշռող հանգամանքներից, այնպես էլ ընդհանուր նախապաշարմունքից կամ խտրականությունից, այնքան ավելի մեծ է կանանց և աղջիկների՝ սեռական բռնության ենթարկվելու ռիսկը և առավել քիչ պաշտպանություն են նրանք ստանում իշխանություններից (օրինակ, հակամարտող շրջաններում, տեղահանված համայնքներում կանայք և աղջիկները, գյուղական վայրերում գտնվող աղջիկներն ու կանայք, էթնիկ փոքրամասնությունները, ապաստան հայցողները):

Օրինակ, մարմնավաճառությամբ զբաղվող կանայք և աղջիկները հաճախ ունենում են աննշան ճանապարհ դեպի արդարություն՝ նրանց նկատմամբ կատարված սեռական բռնության համար: Սա արտացոլում է իրավական պրակտիկայում և հասարակությունում առկա ընդհանուր դիրքորոշումը, ըստ որի, կանայք և աղջիկներն են կրում

պատասխանատվության բեռը սեռական բռնության համար, իսկ տղամարդիկ, ընդհանուր առմամբ, ունեն իրավունք կանանց մարմինների հանդեպ: Օրենքը հաճախ քրեականացնում է կամ այլ կերպ պատժում է կանանց սեքսը վաճառելու համար, այն դեպքքում երբ տղամարդիկ, ովքեր գնում են այդ մարմինները, ոչ քրեականացվում են և ոչ էլ պատժվում: Մարմնավաճառների և աղջիկների դեմ կատարված բռնարարությունը հաճախ անտեսվում է իրավապահ մարմինների կողմից որպես հանցագործություն, թեև, ըստ օրենքի, բռնաբարության բոլոր մեղադրանքները, պետք է մանրակրկիտ կերպով հետաքննվեն և հետապնդվեն: Մարմնավաճառության մեջ անչափահասը (այսինքն, 18 տարեկանը չբոլորած) միշտ պետք է լինի քրեական հանցագործություն, ինչպես օրինակ Էստոնիայում (Քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մաս):[56] Շատ կարևոր է հանցանքը համարել անալոգային բռնաբարությանը և լուրջ վերաբերվել դրան օրենքի տեսանկյունից և գործնականում:

Գ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ապահովել, որ կնոջ կամ աղջկա խոցելի կամ սահմանազատված կարգավիճակը (հաշմանդամություն ունեցող կանայք, դեռահաս աղջիկները, էթնիկ փոքրամասնությունների կանայք, սեռական փոքրամասնություն կազմող կանայք, մարմնավաճառությամբ զբաղվող կանայք, միգրանտ կանայք) չզրկի նրան սեռական բռնության համար արդարադատության մատչելիությունից, ներառյալ, տուժողների կողմից դիմումների հավաքագրման վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելը և ապահովել, որ բոլոր կանայք և աղջիկները (ներառյալ հաշմանդամները) հնարավորություն ունենան (անհրաժեշտության դեպքում տեխնիկական միջոցների կիրառմամբ) սեռական հանցագործությունների մասին զեկուցելու և վարել գործերը ուրիշների հետ հավասարության հիման վրա,
- կատարել փոփոխություններ մարմնավաճառությանը վերաբերող բոլոր օրենսդրական ակտերում այնպես, որպեսզի նրանք, ովքեր վաճառում են սեքսը, և հետևաբար ենթարկվում են ավելի մեծ ռիսկի սեռական բռնության ենթարկվելու համար չկրեն քրեական պատասխանատվություն սեքսը վաճառելու համար,

[56] Փող ստանալու դիմաց կամ այլ օգուտի համար տասնութ տարին չլրացած անձի հետսեռական հարաբերության մեջ մտնելը կամ սեռական բնույթի այլ գործողություն կատարելը պատժվում է մինչև երեք տարի ազատազրկմամբ:

այդպիսով արդյունավետ կերպով լուծելով իրենց դեմ կատարված հանցագործությունների մասին հաղորդում ներկայացնելու համար, այդ իսկ պատճառով նրանք, ովքեր գնում են սեքսը, ինչպես նաև նրանք, ովքեր կարող են սեռական բռնության ենթարկել մարմնավաճառությամբ զբաղվող աղջիկներին և կանանց, պատժվում են ինչպես սեքսը գնելու, այնպես էլ ցանկացած սեռական բռնության համար, որ նրանք կգործեն, թրաֆիքինգի զոհ կանանց և աղջիկների հանդեպ, ովքեր հրաժարվել են սեռական հարաբերություն ունենալուց:

V. Փնտրելով արդարություն ամուսնական բռնաբարությունների դեմ

Ա. Մարդու իրավունքների միջազգային չափանիշներ

Ամուսնական բռնաբարության համար քրեական պատասխանատվության ենթարկելու մարդու իրավունքների միջազգային չափանիշների ուսումնասիրում:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովն իր Ընդհանուր հանձնարարական 35-ով կոչ է անում պետություններին համոզվել, որ «սեռական բռնության հանցագործությունների սահմանումները, ներառյալ ամուսնական բռնաբարությունը և ծանոթի բռնաբարությունը կամ ժամադրման ժամանակ բռնաբարությունը, հիմնված է կամավոր համաձայնության բացակայության վրա և հաշվի է առնում հարկադրանքի հանգամանքները»:[57] Կանանց նկատմամբ բռնության հատուկ զեկուցողը խորհուրդ է տալիս վերանայել քրեական օրենքը կամ ներդնել ամուսնության բռնաբարությունն արգելող նոր քրեական դրույթներ:[58]

Ստամբուլի կոնվենցիան ևս ենթադրում է, որ կանանց նկատմամբ բռնության դեպքերում պետք է ծանրացուցիչ հանգամանք լինի, եթե հանցագործությունը կատարվել է նախկին կամ ներկա ամուսնու կամ զուգընկերոջ նկատմամբ՝ ներպետական իրավունքում

[57] Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողով, Գլխավոր հանձնարարական 35, պարբերություն 29

[58] Տես, օրինակ, կանանց նկատմամբ բռնության հատուկ զեկուցող Դուբրավկա Շիմոնովիչի զեկույցը՝ կանանց նկատմամբ բռնության, նրա պատճառների ու հետեւանքների վերաբերյալ Բահամյան կղզիներ գործուղման ժամանակ,, 25 մայիսի, 2018, A / HRC / 38/47 / Add.2, պարբերություն 73.h.

դրանց տրված իմաստով, ընտանիքի անդամի, տուժողի հետ համատեղ բնակվող կամ տուժողի նկատմամբ ունեցած իշխանությունը չարաշահած անձի կողմից (Հոդված 46ա)։ ՄԱԿ-ի կանանց վիրտուալ գիտելիքների կենտրոնը, որը նպատակ ունի վերջ դնել կանանց և աղջիկների նկատմամբ բռնությանը, սեռական բռնության օրենսդրության հիմնական տարրերը ենթադրում են, որ ամուսնության մեջ սեռական բռնությունը պետք է հատուկ քրեականացվի։

Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովը, Մարդու իրավունքների կոմիտեն եւ Կանանց նկատմամբ բռնության հատուկ զեկուցողը խորհուրդ տվեցին, որ ուսումնասիրվող երկրները հատուկ քրեականացնեն ամուսնական բռնաբարությունը.

- Ղրղզստան. 2018 թ.-ին Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովը հարսի առևանգման վերաբերյալ հարցով խորհուրդ է տվել պետությանը, որ օրենք ընդունի, մասնավորապես, հատուկ ամուսնական բռնաբարությունը քրեականացնող օրենք։[59]
- Տաջիկստան. 2018 թ.-ին Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովը, իր եզրափակիչ ելույթներում, պետությանը խորհուրդ տվեց արագացնել ամուսնական բռնաբարության, ընտանիքում և ընտանիքից դուրս սեռական բռնության մասին օրենսդրության ընդունումը։[60]
- Բելառուս. 2016 թ.-ին Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովը, իր եզրափակիչ դիտողություններում, խորհուրդ տվեց, որ պետությունը ընդունի ամուսնական բռնաբարությունը կոնկրետ քրեականացնող օրենք։[61]
- Լատվիա, 2014 թ.-ին Մարդու իրավունքների կոմիտեն իր եզրափակիչ դիտողություններում խորհուրդ տվեց, որ պետությունը քրեական

[59] Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողով հարցումը Ղրղզստանի նկատմամբ, համաձայն Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին կոնվենցիայի ՖԿԿ-ի 8-րդ հոդվածի, 2018 թվականի սեպտեմբերի 21, CEDAW / C / OP.8 / KGZ / 1, պարբերություն 92.b.

[60] Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովի եզրափակիչ դիտողությունները Տաջիկստանի վեցերորդ պարբերական զեկույցի վերաբերյալ, Նոյեմբերի 9, 2018 թ. CEDAW / C / TJK / CO / 6, կետ 26:

[61] Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովի եզրափակիչ դիտողությունները Բելառուսի ութերորդ պարբերական զեկույցի վերաբերյալ, 2016 թվականի նոյեմբերի 18, պարբերություն 23.ա

օրենսգրքում դիտարկի ամուսնական բռնաբարությունը որպես առանձին հանցագործություն:[62]

- Լիտվա. 2014 թ.-ին Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովը, իր եզրափակիչ դիտողություններում, պետությանը խորհուրդ տվեց փոփոխություններ մտցնել Քրեական օրենսգրքում, որը հատուկ կերպով կքրեականացնի ամուսնական բռնաբարությունը:[63]

Բ. Խնդիրներ տեղական օրենքների և պրակտիկայի հետ

Նախկին ԽՍՀՄ երկրներում ամուսնական բռնաբարության քրեականացման վերաբերյալ տեղական օրենքների և խնդիրների ուսումնասիրում:

Ուսումնասիրվող երկրները չեն նախատեսում կոնկրետ պատիժ ամուսնական բռնաբարության համար: Բացառություն են կազմում ՈՒկրաինան և Մոլդովան, որտեղ ամուսնական բռնաբարությունը ավելի խիստ պատժվում է որպես սեռական բռնության հանցագործությունների ծանրացուցիչ գործոն: (Չնայած Ուկրաինայում հատուկ հիշատակվում է ամուսնության բռնաբարությունը, Մոլդովայում այն կոչվում է «ընտանիքի անդամի դեմ», որը տեսականորեն կարող ներառել իր մեջ ամուսնուն): Վրաստանը, օրինակ, ընտանիքի անդամների նկատմամբ կատարված հանցագործությունները ներառում է ծանրացուցիչ հանգամանք: Լատվիայի քրեական օրենսգիրքը հստակ նշում է, որ ամուսինների կամ նախկին ամուսնու կամ չգրանցված ամուսնու գործընկերոջ նկատմամբ կատարված հանցագործությունները ծանրացուցիչ հանգամանք են բոլոր հանցագործությունների համար: Միջազգային չափանիշներին համապատասխան, կարևոր է, մասնավորապես, քրեականացնել ամուսնական բռնաբարությունը ուսումնասիրվող երկրներում, քանի որ իրավապահ մարմինները հազիվ թե այն ճանաչեն որպես ընդհանուր բնույթի հանցագործություն: Բացի դրանից, Ստամբուլի կոնվենցիան և ՄԱԿ-ի Կանանց

[62] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, Լատվիայի պարբերական 3-րդ զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտողություններ, 11 ապրիլի, 2014 թ., CCPR / C / LVA / CO / 3, Պարբերություն 9.A.

[63]Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե Լիտվայի հինգերորդ ընթացիկ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտողություններ, 2014 թ. Հուլիսի 24, CEDAW / C / LTU / CO / 5, պար. 25.e.

ուղեցույցի առաջարկությունները ենթադրում են, որ նախկին կամ ներկայիս ամուսինների կամ գործընկերների նկատմամբ կատարված հանցագործությունը պետք է դիտարկվի ծանրացուցիչ հանգամանք՝ դատավճիռ կայացնելիս:

Ընտանեկան բռնությունը, որը հաճախ ներառում է սեռական բռնություն, հանդիսանում է լուրջ խնդիր բոլոր իրավահամակարգերում: Այն դեռևս մեծամասամբ համարվում է մասնավոր գործ, որտեղ իշխանությունները չպետք է միջամտեն: Իրավապահ մարմինները և դատական իշխանությունները ընտանեկան բռնության դեպքերում լայնորեն կիրառում են հաշտեցման մեխանիզմները՝ նպաստելով ընտանիքի ակնհայտ միասնությանը՝ զոհերի համար պաշտպանություն և արդարություն ապահովելու համար: Նույնիսկ այնտեղ, որտեղ ընտանիքում ֆիզիկական բռնության որոշակի ճանաչում կա, սեռական բռնությունը ամուսնու կողմից շատ հաճախ անտեսվում է: Որոշ երկրներում կա ճնշում բռնաբարության զոհ չամուսնացած անձի հանդեպ, որպեսզի ամուսնանա հանցագործի հետ՝ խուսափելու ընտանիքի և հասարակության համար ամոթից, նա (աղջիկը) ենթադրում են, որ հրահրել է բռնաբարությունը, ստիպելով նրան հետագայում ենթարկվել բռնության իր «ամուսնու» կողմից:

Բոլոր պետությունների ընդհանուր օրենքները թույլ են տալիս մեղադրանքների ենթարկել բռնաբարության զոհերին կամ սեռային հիմքով կատարված բռնությունների զոհերին կեղծ տեղեկությունների համար, եթե չկան հնարավորություններ հավաքելու բավարար չափի ապացույցներ, որը, հաշվի առնելով իրավահակարգերում արդեն իսկ թվարկված բարդությունները, հաղորդում տալու համար կարող է ունենալ զսպող ազդեցություն: Չնայած հասարակական կազմակերպությունները սեռական բռնության վերաբերյալ այս դրույթի որևէ նշանակալի չարաշահման մասին չեն հայտնել՝ այն կիրառվել է ենթադրյալ ընտանեկան բռնության դեպքերում, որը ներառում է նաև սեռական բռնությունը:

Գ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուղակիրոեն քրեականացնել ամուսնական բռնաբարությունը եւ ապահովել դրա ներառումը որպես բռնաբարության ծանրացուցիչ հանգամանք.

Ինչպես նաեւԱրդյունավետ կերպով հետքաննել և պատժել ամուսնական բռնաբարությունը՝ որպես հանրային շահ:

Երախտիքի խոսք

Սույն հաշվետվությունը հնարավոր է եղել իրականացնել Swedish Postcode Foundation ֆինանսավորման միջոցով;

«Հավասարություն հիմա»-ի անկախ խորհրդատու Էլեոնորա Դավիդյանը, իրականացրել է հետազոտություն և տրամադրել է արժեքավոր տեղեկատվություն: «Հավասարություն հիմա»-ի «Եվրասիա»-ի խորհրդատու Թամար Դեկանոսիձեն իրականացրել է ավելի խորը ուսունասիրություն և տեղում անցկացրել է փորձագիտական վերլուծություն:

Ստորև ներկայացված անհատները և կազմակերպությունները իրենց փորձով և համապատասխան նյութերով իրենց ներդրումն են ունեցել հաշվետվության կազմման մեջ՝

Հալինա Ֆեդկովիչ - Կանանց հեռանկարների ավագ իրավաբան, Ուկրաինա

Նադեժդա Պրիգոդա - իրավագիտության թեկնածու (դոկտոր), Ղրղզ-Ռուսական Սլավոնական համալսարանի դոցենտ, Ղրղզստան

Լարիսա Ալեքսանդրովա - Գենդերային փորձագետ, Տաջիկստան

Զեբո Շարիֆովա-Իրավաբան Կանայք՝ զարգացման համար, Տաջիկստան

Վալենտինա Ֆրոլովա-Իրավաբան, Ռուսաստան

Ստեֆանիա Կուլաեվա - Փորձագետ, Ռուսաստան

Անահիտ Սիմոնյան- Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոնի ղեկավար, Հայաստան

Նվարդ Փիլիպոսյան- Սեռական Բռնության Ճգնաժամային Կենտրոնի իրավաբան, Հայաստան

Վարվարա Միխայլովնա - իրավաբան, Ռուսաստան

Դանիելա Միսաիլ-Նիչիտին -«La Strada» Միջազգային կենտրոն, Մոլդովա

Գործող իրավաբանները և կանանց իրավունքների պաշտպանները, ովքեր մասնակցել են 2018թ.-ի նոյեմբերի 19-21-ը «Հավասարություն հիմա»-ի կողմից Վրաստանում կազմակերպված համաժողովին, սեռական բռնության վերաբերյալ իրենց երկրներում առկա օրենքների և փորձի վերաբերյալ կիսվեցին փորձով, որը նպաստեց այս զեկույցի մշակմանը, ներառված էին հետևյալ մասնակիցները՝

Նվարդ Փիլիպոսյան- Սեռական Բռնության Ճգնաժամային Կենտրոնի իրավաբան, Հայաստան

Ռովշանա Ռահիմովա- գործող իրավաբան, Ադրբեջան

Իրինա Ալխովկա- Գենդերային հեռանկարներ, Բելառուս

Մերլե Ալբրանտ - Մարդու իրավունքների կենտրոն, Էստոնիա

Աիման Ումարովա- Իրավապաշտպան, «Մարդու իրավունքների իրավաբաններ» համահիմնադիր, Ղազախստան

Նադեժդա Պրիգոդա - իրավագիտության թեկնածու (դոկտոր), Ղրղզ-Ռուսական Սլավոնական համալսարանի դոցենտ, Ղրղզստան

Զանե Զվիրգզդինա- «MARTA» կենտրոն, Լատվիա

Դովիլե Մասալսկիեն- Կանանց հիմնահարցերի տեղեկատվական կենտրոն, Լիտվա

Զեբո Շարիֆովա-Իրավաբան Կանայք՝ զարգացման համար, Տաջիկստան

Հալինա Ֆեդկովիչ- Կանանց հեռանկար, Ուկրաինա

Վիոլետա Անդրիուտա - Կանանց իրավունքի կենտրոն, Մոլդովա

Վալենտինա Ֆրոլովա -Գործող փաստաբան, Ռուսաստան

Բաբութսա Պատառայա - “Sapari” միություն, Վրաստան

Անա Աբաշիձե- Գործընկերություն հանուն մարդու իրավունքների, Վրաստան

Անուշ Ասլանյան- հաշմանդամության ունեցող անձանց իրավունքների պաշտպան, Հայաստան:

Գծապատկերներ

Գծապատկեր N1

Սեռական բռնության հանցագործությունների ազգային սահմանումները՝ համեմատած միջազգային չափանիշների հետ:

Սեռական բռնության հետ կապված հանցագործությունները սխալմամբ որակվում են որպես հանուն պատվի կամ բարոյականության հանցագործություն:	Լատվիա[1]
Որպես սեռական բռնության հանցագործության կենտրոնական տարր հանդիսացող համաձայնության բացակայության վերաբերյալ պահանջի ներկայացման ձախողումը և որ ցանկացած համաձայնությունը պետք է տրվի կամավոր՝ անձի ազատ կամարտահայտության արդյունքում,	Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Էստոնիա, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Լատվիա, Լիտվա, Մոլդովա, Ռուսաստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուկրաինա (ներառում է իր սահմանման մեջ համաձայնության բացակայությունը այժմ՝ առանց հեռագա բացատրության) Ուզբեկստան,
Սահմանված չեն հարկադիր պարտադրանքի լայն շրջանակները, որպես սեռական	Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Էստոնիա, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Լատվիա, Լիտվա, Մոլդովա, Ռուսաստան,

բռնության հանցագործության տարրեր:	Տաջիկստան, Թուրքմենստան, Ուկրաինա, Ուզբեկստան, ** Էստոնիան եւ Լատվիան ամենաառաջադեմն են:*
Բռնաբարությանն առնչվող տարրի պահանջ՝ լրացուցիչ բռնության գործադրում, բռնության կատարման սպառնալիք, կնոջ անօգնական վիճակի օգտագործում	Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Էստոնիա, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Լատվիա, Լիտվա, Մոլդովա, Ռուսաստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուկրաինա, Ուզբեկստան
Անկարողություն առանձին հանցակազմով քրեականացնելու ամուսնական բռնաբարությունը և/կամ ինտիմ հարաբերությունը	Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Էստոնիա, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Լատվիա, Լիտվա, Մոլդովա, Ռուսաստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուկրաինա, Ուզբեկստան ** Մոլդովան նախատեսում է ընտանիքի անդամի դեմ բռնաբարությունը, որպես ծանրացուցիչ հանգամանք: Այնուամենայնիվ, չկա ամուսնական բռնաբարության մասին հստակ հիշատակություն:*

[1] Բռնաբարությունը ներառված է բարոյականության և գենդերային անձեռնմխելիության դեմ կատարված հանցագործությունների մասին Գլխում

Գծապատկեր N2

Սեռական բռնության հանցագործություններ, որտեղ օգտագործվում են մասնավոր կամ պետական-մասնավոր մեղադրանքները

Ոչ ծանրացուցիչ հանգամանքներ պարունակող բռնաբարություն	Ադրբեջան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Լիտվա, Ռուսաստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուկրաինա, Ուզբեկստան
Ոչ ծանրացուցիչ հանգամանքներ պարունակող սեռական բռնություն	Ադրբեջան, Բելառուս, Ղազախստան, Լիտվա, Ռուսաստան, Ուզբեկստան
Հարկադիր սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններ	Ադրբեջան, Ղազախստան, Ղրղզստան, Լիտվա, Թուրքմենստան, Ուկրաինա, Ուզբեկստան
Հարկադիր Ամուսնություն	Ադրբեջան, Ուկրաինա, Ուզբեկստան
Սեռական ոտնձգություններ	Լիտվիա, Մոլդովա

Ստորև բերված են անպատժելիության վերաբերյալ օրենքի տառը ամփոփող գծապատկերներ, բացառություններ, որոնք կարող են պոտենցիալ կերպով կիրառվել սեռական բռնության տարբեր հանցագործությունների վրա և այս համատեքստում չարաշահվել: Այսինքն, այս դրույթները, հնարավոր է, չեն կարող կիրառվել

ներկայումս: Այնուամենայնիվ, քաի դեռ դրանք օրինականորեն վերացված չեն, կա հնարավորություն, որ դրանք կարող են գործնականում կիրառվել հանցագործին քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու համար: Օրենքը պետք է հստակեցնի, որ սեռական բռնության հանցագործությունները երբեք չեն ավարտվում արդարացմամբ:

Գծապատկեր N3

Բռնաբարություն (ոչ ծանրացուցիչ հանգամանքների առկայությամբ, եթե այլ բան նախատեսված չէ):

Հաշտեցում	Ղազախստան (Ներառյալ ծանրացուցիչ հանգամանքները, եթե հանցագործությունը կատարվել է խոցելի վիճակի մեջ հայտնված անձի կողմից, բայց ոչ այն դեպքում, եթե զոհը անչափահաս է), Մոլդովա (Ներառյալ ծանրացուցիչ հանգամանքները, եթե հանցագործը անչափահաս է, բայց ոչ այն դեպքում ,եթե զոհը անչափահաս է:)
Ակտիվ ապաշխարհություն	Ղազախստան, Մոլդովա
Դադարում է սոցիալապես վտանգավոր բնույթ կրել	Ղազախստան, Լիտվա (ներառյալ՝ծանրացուցիչ հանգամանքները), Մոլդովա, Ուկրաինա, Ուզբեկստան (ներառյալ՝ ծանրացուցիչ հանգամանքները)
Աջակցում է լուրջ	Էստոնիա (ներառյալ՝ ծանրացուցիչ

հանցագործության բացահայտմանը	հանգամանքները), Լիտվա (ներառյալ՝ ծանրացուցիչ հանգամանքները); Ղազախստան
Երաշխիք/գրավ	Ուկրաինա
Փոխարինել վարչական պատասխանատվությամբ/ ազատ արձակել	Մոլդովա

Գծապատկեր N4

սեռական բռնություն (ոչ ծանրացուցիչ հանգամանքների առկայությամբ, եթե այլ կերպ նախատեսված չէ)՝

Հաշտեցում/	Ղազախստան (Ներառյալ ծանրացուցիչ հանգամանքները, եթե հանցագործությունը կատարվել է խոցելի վիճակի մեջ հայտնված անձի կողմից, բայց ոչ այն դեպքում, եթե զոհը անչափահաս է), Մոլդովա (Ներառյալ ծանրացուցիչ հանգամանքները, եթե հանցագործը անչափահաս է, բայց ոչ այն դեպքում, եթե զոհը անչափահաս է:)
Ակտիվ ապաշխարհություն	Ղազախստան, Մոլդովա, Թուրքմենստան (ներառյալ՝ծանրացուցիչ հանգամանքները),
Դադարում է սոցիալապես վտանգավոր բնույթ կրել	Ադրբեջան, Ղազախստան, Լիտվա (ներառյալ՝ծանրացուցիչ հանգամանքները), Մոլդովա, Թուրքմենստան, Ուկրաինա, Ուզբեկստան (ներառյալ՝ծանրացուցիչ հանգամանքները)
Աջակցում է բացահայտել լուրջ հանցագործություն	Էստոնիա (ներառյալ՝ծանրացուցիչ հանգամանքները), Լիտվա (ներառյալ՝ծանրացուցիչ հանգամանքները); Ղազախստան
Երաշխիք/գրավ	Ուկրաինա

Փոխարինել վարչական պատասխանատվությամբ կամ ազատ արձակել	Մոլդովա

Գծապատկեր N5

“Սեռական հարաբերություն անչափահասի հետ (Անչափահասի բռնաբարությունը) (ոչ ծանրացուցիչ հանգամանքների առկայությամբ, եթե այլ կերպ նախատեսված չէ)՝

Հաշտեցում	Հայաստան, Բելառուս, Լիտվա, Ռուսաստան, Տաջիկստան (ներառյալ՝ ծանրացուցիչ հանգամանքները)
Ակտիվ ապաշխարհություն	Հայաստան, Բելառուս, Ռուսաստան, Տաջիկստան (ներառյալ՝ ծանրացուցիչ հանգամանքները) Թուրքմենստան, Ուզբեկստան
Դադարում է սոցիալապես վտանգավոր բնույթ կրել	Ադրբեջան (ներառյալ՝ծանրացուցիչ հանգամանքները), Հայաստան, Բելառուս, Լիտվա, (ներառյալ ՝ծանրացուցիչ հանգամանքները), Ռուսաստան (միայն ամուսնության դեպքում պատժից ազատում), Տաջիկստան (ներառյալ՝ ծանրացուցիչ հանգամանքները), Թուրքմենստան, Ուկրաինա, Ուզբեկստան(ներառյալ՝ծանրացուցիչհանգամանքները)

Գրավ/երաշխիք	Լիտվա, Ուկրաինա
Աջակցում է բացահայտել լուրջ հանցագործություն	Էստոնիա (ներառյալ `ծանրացուցիչ հանգամանքները), Լատվիա, Լիտվա (ներառյալ՝ ծանրացուցիչ հանգամանքները)
Փոխարինել վարչական պատասխանատվությամբ կամ ազատ արձակել	Բելառուս

Գծապատկեր N6

Հարկադիր սեռական հարաբերություն (ոչ ծանրացուցիչ հանգամանքների առկայությամբ, եթե այլ բան նախատեսված չէ)՝

Հաշտեցում	Բելառուս, Ղազախստան (ներառյալ ծանրացուցիչ հանգամանքները, եթե հանցագործությունը կատարվել է խոցելի վիճակի մեջ հայտնված անձի կողմից, բայց ոչ այն դեպքում,եթե զոհը անչափահաս է), Ղրղզստան, Լիտվայ, Մոլդովայ, Ռուսաստան (ներառյալ ծանրացուցիչ հանգամանքները), Տաջիկստան, Ուկրաինայ, Ուզբեկստան
Ակտիվ ապաշխարհություն	Հայաստան, Բելառուս, Վրաստան, Ղազախստան,

	Մոլդովա, Ռուսաստան (ներառյալ ծանրացուցիչ հանգամանքները), Տաջիկստան, Թուրքմենստան, Ուկրաինա, Ուզբեկստան
Դադարում է սոցիալապես վտանգավոր բնույթ կրել	Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Ղազախստան, Լիտվա, Մոլդովա, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուկրաինա, Ուզբեկստան (ներառյալ ծանրացուցիչ հանգամանքները)
Աջակցում է բացահայտել լուրջ հանցագործություն	Էստոնիա (ներառյալ ծանրացուցիչ հանգամանքները), Լիտվա (ներառյալ ծանրացուցիչ հանգամանքները), Ղազախստան
Գրավ/երաշխիք	Ղազախստան, Լիտվա, Ուկրաինա,
Մեղմացուցիչ հանգամանքներ	Լիտվա
Փոխարինել վարչական պատասխանատվությամբ կամ ազատ արձակել անչափահասին	Բելառուս, Մոլդովա

Գծապատկեր N7

Հարսի առևանգում/հարկադիր ամուսնություն (ոչ ծանրացուցիչ հանգամանքների առկայությամբ, եթե այլ բան նախատեսված չէ)՝

Հաշտեցում	Ադրբեջան, Ղրղզստան (այդ թվում նաեւ անչափահասի հետ հարաբերությունները), Ուզբեկստան
Ակտիվ ապաշխարհություն	Ադրբեջան, Վրաստան, Թուրքմենստան (ներառյալ ծանրացուցիչ հանգամանքները);
Դադարում է սոցիալապես վտանգավոր բնույթ կրել	Ադրբեջան, (ներառյալ ծանրացուցիչ հանգամանքները), Թուրքմենստան, Ուկրաինա, Ուզբեկստան
Աջակցում է բացահայտել լուրջ հանցագործություն	Էստոնիա (Ներառյալ ծանրացուցիչ հանգամանքները)
Գրավ/երաշխիք	Ուկրաինա

Գծապատկեր N8

Ամուսնական տարիքի խախտում (ոչ ծանրացուցիչ հանգամանքների առկայությամբ, եթե այլ բան նախատեսված չէ)՝

Հաշտեցում	Տաջիկստան,
Ակտիվ ապաշխարհություն	Տաջիկստան, Ուզբեկստան

Դադարում է սոցիալապես վտանգավոր բնույթ կրել	Տաջիկստան, Ուզբեկստան

Հավելվածներ

Գծապատկեր N9

Պատիժներ

	Բռնաբարություն	Սեռական Բռնություն	Հարկադիր սեռական հարաբերության	Անչափահասի բռանաբարություն (հարկադիր սեռական հարաբերություն անչափահասի հետ)
Հայաստան	Ազատազրկում 3-6 տարի	Ազատազրկում 3-6 տարի	Ազատազրկում 1-3 տարի	Տուգանք կամ ազատազրկում մինչև 2 տարի
Ադրբեջան	Ազատազրկում 4-8 տարի	Ազատազրկում 3-5 տարի	Տուգանք, հարկադիր աշխատանք կամ ազատազրկում մինչև 3 տարի	Ազատազրկում մինչև 3 տարի
Վրաստան	Ազատազրկում 6-8 տարի	Ազատազրկում 4-6 տարի	Տուգանք կամ ազատազրկում մինչև 3 տարի	Ազատազրկում 7-9 տարի

Ուկրաինա	Ընթացիկ օրենք: Ազատազրկում 3-5տարի *Օրենքը ուժի մեջ կմտնի 2019թ.-ի հունվարի 11-ից* Ազատազրկում 3-5 տարի	Ընթացիկ օրենք: Ազատազրկում մինչև 5տարի *Օրենքը ուժի մեջ կմտնի 2019թ.-ի հունվարի 11-ից* (համաձայն նոր օրենքի, սեռական ակտը չի ենթադրում առնանդամի ներթափանցում) - ազատազրկում մինչև 5տարի	Ընթացիկ օրենք: Տուգանք կամ ազատազրկում 6 ամսով *Օրենքը ուժի մեջ կմտնի 2019թ.-ի հունվարի 11-ից* Տուգանք կամ ազատազրկում 6 ամսով	Ընթացիկ օրենք: մինչեւ 5 տարի ազատության սահմանափակում, կամ ազատազրկում մինչև 5տարի *Օրենքը ուժի մեջ կմտնի 2019թ.-ի հունվարի 11-ից* մինչեւ 5 տարի ազատության սահմանափակում, կամ ազատազրկում մինչև 5տարի
Մոլդովա	Ազատազրկում 3-5 տարի	Ազատազրկում 3-5 տարի	-	Ազատազրկում 3-7 տարի

Բելառուս	Մինչեւ 4 տարի ազատության սահմանափակում, կամ ազատազրկում 3-7 տարի	Մինչեւ 4 տարի ազատության սահմանափակում, կամ ազատազրկում 3-7 տարի	Մինչեւ 3 տարի ազատության սահմանափակում, կամ ազատազրկում մինչև 3 տարի և տուգանքի վճարում կամ որոշակի մասնագիտություններ ի իրավունքից զրկում կամ առանց դրա:	Մինչեւ 4 տարի ազատության սահմանափակում, կամ ազատազրկում մինչև 4 տարի և տուգանքի վճարում:
Ղազախստան	Ազատազրկում 3-5 տարի	Ազատազրկում 3-5 տարի	Տուգանում կամ ուղղիչ աշխատանքներ կամ համայնքային աշխատանք կամ մինչեւ 1 տարի ազատության սահմանափակում, կամ ազատազրկում մինչև 1 տարի	Մինչեւ 5 տարի ազատության սահմանափակում, կամ ազատազրկում մինչև 5 տարի

Ղրղզստան	*Ուժի մեջ է մտել 01.01.2019-ին* 3-րդ կարգի ազատության սահմանափակում	*Ուժի մեջ է մտել 01.01.2019-ին* 3-րդ կարգի ազատության սահմանափակում	*Ուժի մեջ է մտել 01.01.2019-ին* Որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկում կամ ուղղիչ աշխատանք կամ տուգանք կամ 1-ին կարգի ազատազրկում	*Ուժի մեջ է մտել 01.01.2019-ին* 4-րդ կարգի ազատության սահմանափակում
Տաջիկստան	Ազատազրկում 3-7 տարի	Ազատազրկում 5-7 տարի	Տուգանում, ուղղիչ աշխատանքներ կամ մինչև 2 տարի ազատազրկում	Ազատազրկում 2-5 տարի
Ուզբեկստան	Ազատազրկում 3-7 տարի	Ազատազրկում 3-7 տարի	Համայնքային աշխատանք կամ ուղղիչ աշխատանքներ	Համայնքային աշխատանք կամ ուղղիչ աշխատանքներ կամ ազատության սահմանափակում

				1-2 տարով կամ Ազատազրկում մինչև 3 տարի
Թուրքմենստան	3-10 տարի ազատազրկում, պարտադրելով 2-5 տարի ապրել հատուկ վայրում կամ առանց այդ պարտադրանքի	2-6 տարի ազատազրկում,	Ուղղիչ աշխատանք կամ ազատազրկում մինչև 2 տարի	ազատազրկում մինչև 3 տարի
Լատվիա	Ազատազրկում 4-10 տարով և փորձաշրջանային հսկողություն մինչև 5 տարի	Ազատազրկում մինչև 7 տարի և փորձաշրջանային հսկողություն մինչև 5 տարի	-	Ազատազրկում մինչև 5 տարի կամ ժամանակավոր ազատության սահմանափակում կամ հասարակական ծառայություն՝ փորձաշրջանային հսկողությամբ

				մինչև 5 տարի
Լիտվա	Ազատազրկում մինչև 7 տարի	Ազատազրկում մինչև 7 տարի	Ձեռբակալում կամ Ազատազրկում մինչև 3 տարի	**Տուգանում կամ ազատության սահմանափակում կամ ձերբակալում կամ** Ազատազրկում մինչև 5 տարի
Էստոնիա	Ազատազրկում 1-5 տարով	-	Ազատազրկում մինչև 3 տարի	Ազատազրկում մինչև 5 տարի

Ռուսաստան	Ազատազրկում 3-6 տարով	Ազատազրկում 3-6 տարով	Տուգանք կամ հարկադիր աշխատանք կամ ուղղիչ աշխատանք կամ Ազատազրկում 1 տարով	Հարկադիր աշխատանք, ազատության սահմանափակում կամ հարկադիր աշխատանք՝ մինչև 3 տարով որոշ պաշտոններ զբաղեցնելու իրավունքի սահմանափակելով կամ չսահմանափակելով, ազատազրկում մինչև 4 տարի որոշ պաշտոններ զբաղեցնելու իրավունքի սահմանափակելով կամ չսահմանափակելով կամ մինչեւ տաս տարի ժամկետով զբաղվել որոշակի գործունեությամբ:

Կապը մեզ հետ

Եվրոպական գրասենյակ

Լոնդոն/Մեծ Բրիտանիա

1 Բրիդքեյջ Ուոլք
Լոնդոն SW1H 9JJ
Միացյալ Թագավորություն
Հեռախոս՝ +44 (0) 20 7304 6902
Ֆաքս՝ +44 (0) 20 7973 1292
Էլ.փոստ՝ ukinfo@equalitynow.org

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Նյու-Յորք/ԱՄՆ

125 Մեյդեն Լեյն
9-րդ հարկ, Լյուքս Բ
Նյու Յորք NY 10038
ԱՄՆ
Հեռախոս՝: +1-212-586-0906
Ֆաքս՝: +1-212-586-1611
Էլ.փոստ՝ info@equalitynow.org

ԱՖՐԻԿՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԼ

Նայրոբի/Քենիա

Bishops Garden Towers, 1-ին հարկ
Բիշոփս փողոց, Նայրոբի, Քենիա
Հեռախոս՝ +254-20-271-9913/9832
Ֆաքս՝ +254-20-271-9868
Էլ.փոստ՝ equalitynownairobi@equalitynow.org